



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4584

№ 1754.

3061

Ն. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ



Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ե Ի

ՄԿԶԻՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԶԱՄԱՐ

ՔՐԱՆԵՒԻՆՆԵՐՈՐԻ ՏԻՊ

Գլին է 25 կող.

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԵՒ ԳՐԶԱԳԻՐ ԱՅՐՈՒՐԵՆՈՎ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի

Միջայլեան փողոց № 81

1902

491.99-8

9-46

ՊՐՄ-Կ
3061

291.99-8
S-46

Ն. ՏԵՐ-ՂԵՒՈՆԳԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՂՈՒ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ա Յ Բ Բ Ե Ն Ա Ր Ա Ն

Ե Ի

ՍԿՋԲՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅԱՐԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲՍԱՆԵԻԻՆԵՐՈՐԳ ՏԻՊ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԵՒ ԳՐՉԱԳԻՐ ԱՅԲՈՒԲԵՆՈՎ **№ 2002**

Գինն է 25 կոպ.



Թ Ի Յ Լ Ի Ս

Արագատիպ Մ. Մարտիրոսյանցի

Միքայելյան փողոց № 81

1902

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
1999

0105



Дозволено цenzурою. Тифлисъ, 31-го Мая, 1902 г.

2010

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Մայրենի Լեզու»-ի առաջին տարուայ բովանդակութիւնը բաժանել ենք երեք շրջանի: Բուն Այրբնարանը՝ նախընթացի համեմատութեամբ փոքր ինչ փոփոխած, կազմում է առաջին շրջանը: Երկրորդ շրջանը ընթերցանութեան առաջին գիրքն է Այրբնարանից յետոյ. այդ շրջանը բաղկացած է տասնեւվեց մանրաշրջանից: Ամեն մի մանրաշրջան տալիս է նախ բառերի մի խումբ, որոնք ծառայում են որպէս նիւթ զրուցատրութեան և հեշտ ընթերցանութեան համար. այդ բառախմբերին յաջորդում են վարժութիւններ գրաւոր աշխատութիւնների համար. ապա բերում են առածներ, հանելուկներ, ասացուածներ և շուտասուկներ. վերջապէս գալիս են մի կամ միքանի մանկական ոտանաւորներ, մի արձակ նկարագրական և մի պատմողական բովանդակութեամբ յօդուած նոյն բառախմբին վերաբերեալ... սրանով մանրաշրջանը վերջանում է: «Գրքիս» երրորդ և վերջին շրջանը բովանդակում է՝ նախ այն բոլոր բարոյակրթական առակները*), որոնք սկզբումը բերանացի պիտի աւանդուին աշակերտներին եւ որոնցից պիտի առնուին օրինակելի ըրածքը տառագիտութեան համար. երկրորդ—միքանի ընդարձակ առակաձև յօդուածներ. երրորդ—մի ընդարձակ հե-

*) Այդ առակները հետեւեալներն են.—Ազահ շուն (շուն, միս, ջուր). շունը և էշը (էշը). սագը և բադը (սագ, բադ, լիճ). հաւը և ձագը (հաւ, ձագ, ցին). մուկը և կատուն (մուկ, կատու). կաղնի ծառը և եղէգը (կաղնի, ծառ, եղէգ). ողնին և օձը (ողնի, օձ). ոչխարը և գալը (ոչխար). կթի կով (կով, կաթ, պանիր). յ տառի համար վերցնելու է՝ «յոպոպն ինքը հստած է, կարծում է բունն է հոտած», առածը:

քիաթ՝ «Գիտական զգուշացումներ», և վերջապէս — բազմաթիւ մանկական ոտանաւորներ՝ մէջէմէջ դրուած:

Մենք խոստովանում ենք, որ մեր գրքի նիւթը շատ է մի տարուայ համար. բայց մենք կարևոր չենք համարում կրճատումներ անել այդ կողմից, որովհետև շատից կարելի է քիչ բան քաղել, կարելի է ընտրութիւն անել տեղին ու ժամանակին համապատասխան, իսկ քիչից շատ բան ընտրել չի կարելի: Այն ուսուցիչները՝ որոնք ժամանակ քիչ ունին, կարող են բաւականանալ գրքիս մի կամ միւս շրջանով, իսկ նորա, որոնք աւելի բարեյաջող պայմանների մէջ են, օգուտ կը քաղեն բոլոր շրջաններից:

Կարևոր ենք համարում շեշտել և մի հանգամանք. մեր առաջարկած եղանակով կարելի է սկսել դասաւանդութիւնը միմիայն այն ուսումնարաններում, ուր մայրենի լեզուի ուսուցումը նախորդում է միւս լեզուների ուսուցմանը. իսկ ուր աշակերտներն արդէն կարգում են որևէ լեզուով, այնտեղ ուղղակի պէտք է գիմել նպատակին, այսինքն շարժական կամ գրչագիր տառերի օգնութեամբ պէտք է ծանօթացնել պէտք եղած նշանագրերի հետ և ապա անմիջապէս անցնել կարդալուն:

Առաջ ենք բերում այստեղ մի դաս՝ որպէս նմուշ, ուսուցչին մեր եղանակի առանձնութիւններին ծանօթացնելու նպատակով:

ԱՌԱՋԻՆ ԴԱՍ—շուն:

1. Բարոյախօսական մասը.

Ուսուցիչը պատմում եւ պատմել է տալիս «Ազահ շուն» վերնագրով բարոյախօսական առակը (երրորդ շրջանի առաջին յօդուածը):

2. Իրազննական մասը.

Զրուցատրական ձևով եւ հարցմունքների միջնորդութեամբ ծանօթացնում է շանը — առարկային:



36372-66

Զրուցատրութեան արդիւնքը պէտք է մօտաւորապէս հետեւեալը լինի.

«Ջունն ապրում է տանը. նա ուտում է հաց և կաթ, բայց աւելի սիրում է միս. նա ընտանի մսակեր կենդանի է: Զան մարմինը կազմուած է չորս մասից՝ գլուխ, պարանոց, բուն, ոտներ: Զան գլխի վրայ մենք տեսնում ենք՝ բերան, քիթ, աչքեր և ականջներ: Զան գլուխը միացած է բնի հետ պարանոցով. նրա բունը կտր է. բնի հետը նա ունի երկար պոչ: Զան ստորին մասերը կոչոււմ են ոտներ. նա ունի չորս ոտը. իւրաքանչիւր ոտը բաղկացած է երեք մասից՝ ազդր, սրդ և թաթ. ամեն մի թաթի վրայ չորս-չորս մատներ ունի, որոնք զինուած են սուր-սուր եղունգներով—ճանկերով: Ոտներին նայելով՝ շունը չորքոտանի կենդանի է կոչոււմ: Իր սուր ժանիքներով շունը կծում է մարդկանց. դրա համար նրանից վախենում ենք: Զունը իւրաքանչիւր ծնօտի վրայ երկու ժանիք ունի:

3. Կարդալու վարժութիւն, որ ունի չորս ստորաստիճաններ. ա. Վերլուծութիւն բառի.

Ուսուցիչը վերլուծում է առարկայի անունը—շուն.

«Մենք նախընթաց դասի մէջ զննեցինք շունը իրրեւ առարկայ, իսկ այժմ կը քննենք նրա անունը—շուն—իրրեւ բառ: Իրրեւ առարկայ զննելու միջոցին, մենք նայեցինք շան վրայ, մենք դիտեցինք նրան աչքերով. ուրեմն զննութիւնը կատարեցինք տեսանելիքի միջնորդութեամբ: Իսկ այժմ շունը չկայ այլևս, մենք կամենում ենք խօսել նրա անուան—շուն բառի վրայ: Արդեօք առարկայի անունը նոյնպէս կարելի է զննել տեսողութեան միջնորդութեամբ.—Ո՛չ: Ուրեմն ինչպէս կամ ինչի միջնորդութեամբ զննենք շուն բառը:

—Այ ինչպէս: Երբ մենք զննեցինք շանը իրան, նա մեր աչքի առաջն էր, մենք նրան տեսնում էինք աչքով, իսկ այժմ շան հետ էլ մենք գործ չունինք. այժմ միայն պէտք է իմանանք, թէ ինչպէս է շինուած այդ առարկայի անունը՝ շուն բառը, իսկ այդ իմանալու համար պէտք է լաւ լսենք.—222 ու ուն (կրկնում է միբանի անգամ): ԴԷՏ, ականջներդ լաւ սրեցէք և ինչ որ կ'ասեմ, լաւ լսեցէք.—2Ղ2Ղ (կպցնում է հնչիւնը միմեանց առանց ը տառի օգնութեան և արտասանում է նրան ատամների արանքից). բոլոր բանն ասացի. Պետրոս, ասա միեւնոյն հնչիւնը: Սարգիս, դ՛ու ասա: Արամ—դ՛ու... Ասացէք

ամենքդ խմբովին: Այժմ լաւ լսեցէք. կարող եմ բաց բերանով և պարզ ու երկար ձայնով արտասանել այդ հնչիւնը: Փորձենք: (Փորձում է և փորձել է տալիս:): Ուրեմն շ խուլ ձայն է. նա դժուար է ասուում:

Լաւ լսեցէք այժմ:

շ ու ս ու ս ու ս: Այժմ բոլոր բառն ասացի:—Ոչ, կէսը, միայն երկու մասը, երկու հնչիւնը: Այժմ դու ասա, Հայկ. դու, Կարապետ, ամենքդ միասին ասացէք: Վարդան, ասս առաջին հնչիւնը. Արամ, ասս երկրորդը: Մկրտիչ, կրկնիր երկուսն էլ, ձգիր մինը միւսի յետևից. այժմ կարճ ասա: Լաւ, հիմա լսեցէք. դուք տեսնում էք, որ երկու հնչիւնը կարելի է ձգած ասել—շշ ու ու ու և կարելի է կարճ ասել—շու: —Այժմ դու, Յովհաննէս, ձգիր հնչիւնները միմեանց յետևից, ասս նրանց կարճ, կպցրած:—Մինաս, ասս միայն առաջին հնչիւնը: Մկրտիչ, դու երկրորդն ասա: Յուրկ, ասս երկրորդը, յետոյ առաջինը. ձգիր. կպցրու: Ասացէք միասին երկրորդ հնչիւնը, ապա առաջինը. ձգեցէք, այժմ կարճացրէք. ինչ ստացանք (ուշ): Ի՞նչ է նշանակում ուշ: Այժմ լսեցէք նորից՝ շուշուշ: Հիմա բոլոր բառը ձգեցի, թէ էլի բան մնաց: —Բոլորը:—Ուրեմն քանի ձայն կայ շուշ բառում: Ասս, Արամ, առաջինը. դու, Կարապետ, երկրորդն ասս, ձգիր, այժմ կպցրու. Մինաս, ասս երրորդը, երկրորդը, առաջինը: Հայկ, ձգիր Մինասի ասած բոլոր հնչիւնները երկար. կրկնեցէք ամենքդ. այժմ կարճացրէք. ինչ ստացանք, Գարեգին:—Շուշ: Ի՞նչ է նշանակում շուշ:

Ջրուցատրուծեան հետեւանքը լինում է այն, որ աշակերտները որոշում են եւ վերլուծում հնչիւնները ջոռն, ոռն, մոռն բառերում:

բ. Հնչիւնների համեմատութիւնը:

Այժմ քննենք ամեն մի հնչիւնը առանձին:

—Քանի հնչիւն կայ շուշ բառի մէջ: Ո՞րն է առաջինը, ո՞րն է երկրորդը, երրորդը.—Այդ հնչիւններից ո՞րն է աւելի պարզ ասուում. իսկ ո՞րն է խուլ ասուում:

—Լաւ. ուրեմն ու պարզ է ասուում. նրան կարող ենք հեշտութիւնով ձգել—արտասանել, նա որոշ ձայն ունի. իսկ շ և ն խուլ ձայն են հանում՝ նրանց հեշտութիւնով ձգել, պարզ ու բարձր արտասանել չենք կարող. նրանք դժուար են ասուում, կ'ասես թէ լսեղուում են ատամներիդ արանքում:

Ուրեմն այդ հնչիւններից մէկին մենք կ'անուանենք լաւ ձայն ունեցող—ձայնաւոր, իսկ միւսներին կ'անուանենք վատ ձայն ունեցող—

քաղածայն:—Ո՞րին կ'անուանենք ձայնաւոր հնչիւն, Գարեգին. իսկ ո՞րոնց ենք ասում բաղաձայն հնչիւններ, Հայկ:—Ասացէք ամենքդ ձայնաւոր հնչիւնը. այժմ առաջին բաղաձայն հնչիւնը. այժմ վերջինը. (Ուսուցիչը պէտք է աշխատէ, որ շ և ն հնչիւնները արտասանելիս, ը ձայնը չկպցնեն նրանցից, այլ արտասանեն ատամների մէջ. ն հնչիւնը պէտք է արտասանել երկու ը-ի մէջ, միայն առանց ը-երի ձայնը զգալի կացուցանելու. միևնոյնը պէտք է իմանալ և միւս բաղաձայնների մասին այսուհետև:)

գ. Ծանօթ հնչիւնը անծանօթ բառերի մէջ.

«Այժմ լսեցէք, տղայք, թէ ինչ բառ կ'ասեմ ձեզ.—ծուկ: Ի՞նչ բառ ասացի, Կարապետ: Կրկնիր, Մկրտիչ...—Մտածեցէք այժմ, թէ այս բառի մէջ չկայ արդեօք ձեզ ծանօթ հնչիւններից. ո՞րն է, Յովհաննէս: Իսկ կուտ բառի մէջ ինչ ծանօթ հնչիւն կայ: Ի՞նչ ծանօթ հնչիւն կայ էշ բառի մէջ. իսկ տուն, սան, նոր բառերում:

—Ո՞վ կարող է իրանից այնպիսի բառ ասել, որի մէջ լինի ու հնչիւնը: Ասս, Հայկ. դու ասա մի ուրիշը, Գարեգին: Մտածեցէք այնպիսի բառ, որի մէջ լինի շ հնչիւնը... Այժմ այնպիսի բառ գտէք, որի մէջ լինի ն հնչիւնը...

Լաւ, հիմա կրկնենք բոլորը. քանի հնչիւն գիտենք մենք. ինչպէս անուանեցինք ու հնչիւնը. ինչպէս ենք անուանում շ, ն. ինչի ենք այդպէս անուանում: Ի՞նչ կ'ստանանք, եթէ ձգենք շ եւ ու, իսկ եթէ կպցնենք: Ի՞նչ կ'ստանանք, եթէ ձգենք ն ու շ. իսկ երբ կպցնենք. ինչ է նշանակում նուշ: Քանի բառ կարող ենք կազմել շ, ու, ն հնչիւններից (ուշ, շուշ, նուշ—ուշ ու նուշ):

դ. Գրելու վարժութիւն.

Աշակերտները գրում են այն վարժութիւնները և ապա՝ աստիճան առ աստիճան, նաև այն բառերը, որոնք առաջ են բերուած «գրչագիր» մասի մէջ իւրաքանչիւր բառի համար:

Միևնոյն բարոյախօսական առակից վերցրած բառերը՝ «միս» և «ջուր» պէտք է վերլուծել նոյն ձևով, ինչպէս «շուշ», բայց աւելի համառօտ ու ամփոփ, որովհետև վերլուծութեան զարգանքը առաջին դասից արդէն յայտնի է մանուկներին:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ Ա. ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ԶԲՁԱՆ

I



շուՆ—ու, շ, ն.

ու, ուշ, ուն, նու, նուշ, շուն.

ուշ ու նուշ. շուն ու նուշ.

միս—ի, ս, մ.

իմ, մի, մին, ուս, սուս, շիշ.

շուն ու միս. միս ու շուն.

ԶՈՒՐ—ջ, ը.

ուշ, ուս, ուր, իր, իմ, սուր, մուր, շիշ. ունիմ,
ունիս, ունի. շուն ունիմ. միս ունիս. նուշ ունի:

II



ԷՉՐ—է, ը.

էշ, էս, էն, էր, էջ, ուշ, ուս, ուր, սուս,
նուշ, շուն, շէն, մէջ, սէր, սուր, իր, մին.

շունը, միսը, ջուրը, նուշը, սուրը, մուրը, շիշը.

Ջունը. նուշը. Միսը. Սուրը. էշը. Ջուրը. էմինը.
էմինը մի շուն ունէր: Ջունը սիրում էր միս:

III



ՍԱԳ—ա, գ.

սա, նա, շար, սար, գամ, գաս, մաս, սուր,
մուր, մուգ, միս, գիր, գին, աջ, էջ, անուն, գարի:

Սարգիսը ունի անուշ գինի:
Ջուշանը ունի սիրուն շուշան:

բաղ—բ, դ.

բան, բազ, գաջ, դաս, սա, սար, սագ, բու,
բուն, դու, դուր, գիր, գին, մուր, սուր, ջուր:

լիճ—լ, ճ.

սա, սար, սալ, լալ, լար, բալ, շալ, կալ, ճար,
ճաշ, ճանճ, սուրճ, մուրճ, ճրագ, ճիճու, Լուսի:

Դու բաղ ունիս: Դու ունիս բաղ: Բաղ ունիս դու:
Նա ունի սագ: Նա սագ ունի: Սագ ունի նա:

Սագը ջուր է սիրում:

Բաղն էլ սիրում է ջուր:

Սագն ու բաղը գնում էին լիճը:

ա, ու, ի, է, ք, շ, ն, ս, մ, ր, ջ, փ, բ, դ, ւ, ճ.

Ա, Ի, է, Ը, Ձ, Ն, Ս, Մ, Ր, Ջ, Ք, Բ, Դ, Լ, Ճ.

IV



հալ—հ, ւ, չ, Ի.

հա, ահ, բահ, շահ, մահ, գահ, ջահ, հուր, նա, նաւ,
դու, դա, դաւ, բան, բաւ, հալաւ, սասաւ, հասաւ:

ճագ—ձ, Ձ.

ձի, ձու, ձիգ, ինձ, հունձ, գունդ, գանձ, սանձ,
ճանճ, ձագար, ճագար, ձաւար, ճիճու, ճրագ:

ցին—ց, Յ.

հա, հաւ, ցաւ, նաւ, հաց, հունց. ցին—ուրուր.
Գրնացի, գրնացիր, գրնաց: Մրնացի, մրնացիր,
մրնաց: Ասացի, ասացիր, ասաց:

v



մուկ—կ, Կ.

էս, կէս, կալ, գալ, կիր, գիր, կար, գար, արջ,
կարճ, մէկ, մէգ, գարի, կարիճ, կացին, Կարին:

կա-տու —տ, Տ.

կուտ, տուտ, սուտ, շուտ, ճուտ, մատ.
լիճ, ջիլ, ճիտ, տանձ, գանձ, սանձ, ցանկ.
կարագ, կարաս, կաւիճ, Տաճատ, Դատ.

մարտ, մարդ. տար, դար. տատ, դատ.
տաշտ, դաշտ. տուր, դուր. տաս, դաս.

Նուշ, շուն, տուն, նաւ, կաւ, կէս, մատ, ճաշ, դատ:
Ա-նուշ, Չու-շան, Լու-սիկ, Ջա-նիկ, Է-մին, Ա-րամ,
Մի-մոն, Մար-գար, Սա-հակ, Մի-նաս, Սար-գիս:
Սըր-բու-հի, Չու-շա-նիկ, Իս-կու-հի, Սա-նա-սար,
Ա-րա-րատ, Բա-գա-րատ, Նա-ւա-սարդ, Համ-բար-
ձում, Ա-նու-շա-ւան:

Ցինը տարաւ հաւի ձագը:

Կատուն մտաւ դաշտի մէջը:

Մինասը գնաց Արամի տունը:

Տաճատը մնաց ուսումնարանումը:



կաղ-նի — դ, Ղ.

աղ, աղուն, կաղ, կաղին, մաղ, մաղիկ, ուղի,
 ուղիղ, ջաղաց, ճակատ, ձանիկ, Ղուկաս.

ծառ — ժ, ու, Ծ, Ռ.

ծալ, ծամ, ժիտ, ճիտ, ժիր, ձագ, ծակ, ուր,
 ուռ, ոռւս, սար, սառ, դար, դառ, կար, գառ,
 ժիրան, ժիծառ, ծարաւ, Ծատուր, Ռուբէն:

եղէգ — ե, Ե.

եա, եմ, եկ, երգ, եկաւ, երկիր, երկար, Եւա, Եսաւ.

էս, ես, էն, են, էգ, եկ, էջ, էջ-մի-ա-ծին.

մէջ, մէկ, մէգ, շէկ, կէս, գէտ, կէտ, սէր, տէր.
 կեր, սեր, հեր, բեր, նետ, նեղ, մեղ, մեծ, ծեծ.

Գրում եմ, կարդում ես, կարում է:

Ես գրում եմ, դու գրում ես, նա գրում է:

Իսահակը կարդում է իր դասերը:

Անուշը կարում է Լուսիկի հալաւը:


Նունուշը գնում է դրացու տունը:

Ղուկասը ջրում է հարեանի արտը:

Ծատուրը սրբում է տանտիրոջ բակը:

Եսաւը համեղ ճաշ է ուտում:

Ջաւահիրը գեղեցիկ շորեր է կարում:



ոզնի — ո, ու. գ. Ջ.

ոտ, որ, ող, որս, ոզի, ոսկի, ոստիկ, ոսկան.

զաւակ, ընկուզ, ընկեր, ընտիր, աւագ, ազատ.
զազան, զատիկ, ազգական, զաւազան, Ջարեհ.

օճ — օ, օ.

օղ, օր, օ՛ն, օշ, օղ, օտար, օգուտ, օրէն, օրինակ.

օր, որ, օղ, ոտ, օղ, ող, օճ, որձ, օրէն, որ-էն.
հօր, հոր, մօր, մոր, հօտ, հոտ, մօտ, մոմ.
աղօտ, աղոտ, արօտ, կարօտ, հողոտ, բորոտ.

Օձի կծածը կրսաղանա, լեզուի կծածը չի սաղանալ:

Օճը առաջ ազատողին կը կծի:

Կարմիր ձուն զատկին կրսաղի:

Տարին մի զատիկ, էն էլ նաւակատիկ:



ոչխար — չ, Չ. խ, Խ.

խաղ, խաւ, խակ, խոզ, խոտ, խոց, սոխ, խունկ,
խուրձ, խիստ, խմոր, խաւար, խառատ, Խորէն.


չար, չոր, չանկ, մինչ, մանչ, չամիչ, չեչոտ, աչիկ,
կանաչ, կաչաղակ, ճախարակ, Խաչիկ, Չատի.

կաղ, կախ, ցեղ, ցեխ, աղ, ախ, աղտ, ախտ,
ձախ, ծախ, ճախ, ճաղ, մեխ, մեղ, սոխ, սող.
խաղող, խաղացող, աղախին, Աղասի, Ղարաբաղ.

Կատուին խաղ է, մկանը մահ է:

Աղուէսի գունչը խաղողին չհասաւ, ասաց խակ է:

Իմացողին մին, չիմացողին հազար ու մին:



կոՎ—վ, վ.

վար, վառ, վատ, վարդ, վէզ, վէմ, վեց, վեր,
վուշ, վիհ, վէճ, վիճակ, Վահան, Վարդան.

կաթ—թ, Թ.

թաթ, թութ, թան, թուխ, թուշ, թող,
թի, թոկ, կոթ, թիւ, թել, թուղ, Թոմաս.

պանիր—պ, Պ.

պար, պաս, պաղ, պապ, կապ, բան, պան,
բաղ, պատ, բանիր, պանիր, բարի, Պօղոս.

վ. ւ.*)

վազ, վաղ, վախ, վեց, վէճ, վարձ, վերջ, Վան.
կաւ, հաւ, նաւ, ցաւ, թել, հաւատ, նաւակ, կաւիճ.

կով, հով, սով, բով, բարով, սրով, տարով.
թիւ, անիւ, ազնիւ, կռիւ, արծիւ, պատիւ.

ով, ովկիանոս, ովսաննա, Ովակիմ, Ովսիա.


իւ, թիւ, անիւ, արեւ, անձրեւ, ազնիւ, կորաւ.
իւր, թիւր, ալիւր, արիւն, աղբիւր, աղիւս, Կորիւն.

տատ, դատ, թաթ. տուր, դուր, թուր.
տէր, դեր, թեր. մարտ, մարդ, մարթ.
տաս, դաս, թաս. մուտ, մութ. որդ, որթ.

Աղ ու հաց սիրտը բաց:
Հաց ու պանիր, կեր ու բանիր:
Հացի կտրածը թուրը չի կտրիւ:
Կուշտը սովածին մանր կբբրդի:

*) ւ և վ տառերը:—10 հնչիւնը:

X



փիղ — փ, Փ. Ֆ, Ֆ.

փուփ, փակ, փոս, փոր, փող, ծափ, թեփ.
փափուկ, կանեփ, փետուր, փողոց, Փրկիչ.

փիղ — Ֆիլ. նաւթ — նաֆթ. փէս — Ֆէս. փլաւ —
Ֆիլաւ. փուրզօն — Ֆուրզօն. մափրաշ — մաֆրաշ.

քոթոթ — ք, Ք.

քար, քիթ, քող, քուրք, հանք, փառք, քուրդ.

կող, գող, քող. կար, գար, քար. կարի, գարի,
քարի. կանոն, քանոն. Քրիստոս, Քերովբէ.

մաքի ոշխար, մատակ ձի. մարի հաւ. մէրուն խոզ.

ժանիք — ժ, Ժ.

ժամ, ժիր, կուժ, ժանգ, ուժ, բուժ, բաժակ,
բաժին, արժան, պատիժ, բժիշկ, ժպիտ, ժողով.

Փիղը ժանիքով պաշտպանում է իւր անձը:
Բժիշկը բաժակով դեղ տուեց հիւանդին:
Ժամագործը ֆուրգօնով տեղափոխեց ապրանքը:
Ֆէսաւոր մարդը փողոցներում նաւթ է ծախում:

Հեղինէն փող տուեց աղքատին:
Հեղինէն աղքատին փող տուեց:
Փողն աղքատին տուեց Հեղինէն:
Մանուկը պատիւ է տալիս ծերերին:
Պապը սիրում է իւր թոռներին:

յոպոպ —յ, Յ.

հարկ, յարկ, յարգ. հարթ, յարդ. համը, յամը.
հետ, յետ. համար, յամառ. հատիկ, յատակ.
հատու, յատուկ. յունապ, յիսուն, Յիսուս.

- ա) այ, էյ, վայ, հայ, բայ, օյ, նոյ, թէյ, հէյ.
- բ) գաթայ, ծառայ, փեսայ, տեսայ, յետոյ, երեկոյ.
- գ) մայր, հայր, այծ, կայծ, գայլ, այր, այրի, այգի.
- դ) բոյր, ծոյլ, թոյլ, յոյս, բոյս, լոյս, Պարոյր, Վրոյր.

Յիսունն օրհնեց բարի մանուկներին:
 Մարդիկ չեն յարգում յամառ տղաներին:
 Հայրս հրաւիրեց ծերունի քահանային:
 Կայծը հրդեհեց խոտի դէղը:
 Գայլը պատառտեց այծի ուրբը:
 Այս երեկոյ այգում թէյ կըխմենք:
 Մայրս մեզ համար գաթայ է թխում:
 Այրի կինը այծի կաթն էր ծախում:
 Քոյր ու եղբայր աշխոյժով խաղում էին:
 Ծոյլ տղան իր յոյսը դնում է ուրիշներին վրայ:

*) «Յոպոպն ինքը հոտած է, կարծում է՝ բունն է հոտած»:—յ
 տառը բառի սկզբում որպէս հ:
 ա—միավանկների վերջում որպէս կէս ի—ն:
 բ—բաղմավանկների վերջում մնում է համը:
 գ—բառերի մէջը բաղաձայնից առաջ (աի—ա՛ն):
 դ—ո-ի հետ բաղաձայնից առաջ (ոյ—յ՛ն):

Վ յի Մարգարի Երուբին

Խ յյ, լլ, ո, ս, սս, ս, ս, ս, ս, ս, ս, ս, ս,

տ, շ, ն, ուշ, ուն, նու, նուշ, շուն

ի, ս, լ, իս, իսս, իս, շիշ, ին, սին

շ, ց, բ, ուր, գուր, աուր, սաս, շուրց

բ, բ, ք, քշ, ք, ք, ք, ք, ք, ք, ք, ք

ա, ա, գ, սա, սաս, սագ, գաս, լաս

բ, ց, բայ, բագ, գաս, ցու, բու

լ, ն, ալ, լալ, շալ, էաշ, լիէ, աեու

ե, լ, հա, ահ, հաւ, նաւ, խհ, շաք, գաք

չ, չի, չու, չագ, չիգ, հուն, չին, սին

ց, հաց, ցաւ, ցան, բաց, ցին, ցից, լաց

ly, uyl, luy, luy, lyp, f, ly, luy, luy, luy

u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u

q, uq, luyq, luyq, luyq, luyq, luyq, luyq, luyq, luyq

u, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

o, n, p, p, p, p, p, p, o, o, o, o, o, o, o, o, o, o, o

q, n, q, luy, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u

luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy

luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy

luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy

luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy

luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy, luy

u, u, a, n, u, n, o, u, f, f, h, b, f, u, u

f, q, y, q, y, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

f, f

f, q, y, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

q, n, p, f, p, q, q, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

f, f

u, p, p, q, q, q, y, q, y, f, f, q, f, p, p

p, f

u, q, u, n, u, f, u, q, p, p, y, u, f, f, o, f

u, f, q, p, p, u, u, f, p, p, f, f, f, f, f, f, f, f, f, f, f

u, f

u, q, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u, u

Բք հայր, որ քրեմիումն քա, սուրբ
 քիւնի քա սնուներ, գայ քա քազա-
 սուրբիւնը, քիւնի քա կապք քիւնի
 Բքայ, քնւայքա քրեմիումնք, Բք
 սաքնուր քայ հայր քուր քգ սքաք.
 քոզ քգ քք սքաք քքքքքք, քնւայքա
 որ քնք քոզու քնք քք սքաք քա-
 սանքքիւնը. քգ քիւնք սանքքի ք
 սանքիք, սք քիւնքիք քգ քաքիք, որ-
 սնքիքն քննք քազասուրբիւնը
 քքսքիւնը ք քաքքք քայ ք ք
 քաքիք քան: = ք. Անքնուներեան

ո, ւ—ու. եւ—և. ե, ա—եա.

ուշ, ուղտ, ուղիղ, ուղեղ, ուրախ, ուրագ.
 ձու, լու, բու, աղու, լեզու, առու, մեղու.
 ձուի, լուի, բուի, լեզուի, առուի, մեղուի.
 աղուէս, պատուէր, նուէր, Աստուած:

եւ—և. սեւ—սև. թեւ—թեւ. արև, անձրև, տերև.
 հողեակ, որդեակ, սենեակ, Արուսեակ, Երանեակ:

Առաւօտեան ես վարժարան եմ գնում:
 ժամը ութին մեր դասերն սկսում են:
 Երեկոյեան պատրաստում եմ միւս օրուայ դասերս:
 Քոյրս էլ ուսումնարան է գնում կարդալու:
 Ծոյլերի նման մենք մեր յոյսը ուրիշների վրայ
 չենք դնում:—Հայրս միշտ խրատում է մեզ, որ
 մեր ժամանակն իզուր չվատնենք:

Խելօք երեխան այսպէս պիտ' լինի'
 Կանուխ պիտ' դարթէ, շուտ քուն պիտ' մտնի,
 Պիտի չմաշէ սիրտը հօր ու մօր,
 Իպրոց պիտ' երթայ, կարգայ ամեն օր:



36 372-66

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԿՈՄԻՏԵ
 ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ
 ԿՈՄԻՏԵ
 ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ
 ԿՈՄԻՏԵ

Ամբողջ այբուբենը

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ

խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո,

չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, լ, փ, ք,

և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ,

ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, լ, փ, ք,

և, օ, ֆ:

ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ,

ճ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ը, ց, լ, փ, ք,


և, օ, ֆ:

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Ը, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ,

Շ, Ը, Թ, Ժ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Թ, Ձ, Ռ, Ս, Վ,

Տ, Ր, Յ, Ի, Փ, Ք, Օ, Ֆ

ԵՐԵՎԱՆԻ ԶԲՋԱԾ



1. ԴԱՍՍԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ԽԱՂԱԼԻՔ

Գ ա ս ա կ ա ն ա ռ ա ղ կ ա ն ե Ր՝ գ ի ռ ք, գ ը ի շ, ք ա ն ո ն, մ ա տ ի տ, տ ե տ ղ ա կ, ք ա ղ է-տ ա խ տ ա կ, ք ա ղ է-գ ը ի շ, թ ա ն ա ք-ա մ մ ա ն, կ ա լ ի ճ . . .

Խ ա ղ ա լ ի ք՝ գ ն ղ ա կ, տ ի կ ի ն, հ ո լ, վ է գ, շ ի լ ի կ, շ ի լ-կ ա փ ա յ տ:

* Բարեգրիչը դասական սուարկայ է: Գնդակը խաղալիք է: Մատիտը. տետրակը. տիկինը. քանոնը. թանաքամանը. հոլը. շիլիկը. գրչահատը. գրատախտակը. քարետախտակը:

Գիրք՝ մէջը քաղցր միրգ:—Ինչ որ գրուեցաւ գրիչով, չի հանուիլ բահով բրիչով:—Մատիտը մատիգ, կօշիկը ոտիգ, ճամպայ որ երթաս, միշտ լինին մօտիգ:—Հոլը կ'ուզէ խարազան, որ սլտոյտ գայ անխափան:—Վէզի

*) Չղագրով շարած բոլոր նիւթերը գրաւոր վարժութիւնների համար են:

ՀԱՅԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԿՈՄԻՏԵ
 ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԻՍՏԱՆԻ
 ԿՈՄԻՏԵ

կարմիրն է սիրուն, վաստակ է զարկողներուն:—2ուան ցատկերն օգտակար շարժմունք է մանկանց համար:

Առաժներ:—Ով կրկարդայ, նա մարդ ա.—Ով կրխադայ, նա կրկադայ:—Ով կ'աշխատի, նա կ'ուտի:

Հանելուկներ.—1. Գլուխս կտրեցին, սրտիկս հանեցին, գինի խմեցրին, լեզուս բացուեցաւ, խօսիլ սկսաւ:—2. Քանի որ ծեծը կ'ուտէր, ուրախութեամբ կրպտրտէր, երբոր ծեծը վերջացաւ, ընկաւ գետին ու մեռաւ:

2. Դ Ա Ս Ա Տ Ո Ւ Ն

Գասատան մէջ նստած են աշակերտները: Աշակերտների առաջ նստած է վարժապետը: Վարժապետը սովորեցնում է: Աշակերտները սովորում են: Երբոր վարժապետը ներս է մտնում, աշակերտները ոտի են կանգնում և աղօթում են: Աշակերտները դասատանը կարդում են, գրում են, հաշուում են թուերով, երբեմն էլ նկարում են: Աշակերտների դիմացը դրած է մի մեծ գրատախտակ: Գրատախտակի մօտ դրած է կալիճ և սպունգ: Գրասեղանների վրայ դրած են դասական առարկաներ:

3. Հ Ր Ա Ի Է Ր

Եկէք, ընկերներ, եկէք,
Արագ-արագ վազեցէք.
Գասի սեղանն պատրաստուած,
Գասագրքերն են բերուած.
Փամանակ է՝ վազեցէք,
Եկէք, ընկերներ, եկէք:

4. ԶՈԿ-ԶՈԿ ԵՒ ՄԻԱՍԻՆ

Վարդանիկն ու Սաթինիկը խաղում էին: Վարդանիկն իր հոլն էր պտըտացնում: Սաթինիկը տիկինի էր տալիս: Վարդանիկը բարկացաւ Սաթինիկի վրայ. «Իմ հոլին մի մօտենար, ինձ հետ խաղ մի անիր», ասաց:—Գու էլ իմ տիկինին մի ձեռք տար, պատասխանեց Սաթինիկը նեղացած:



Մանուկները հեռացան իրարից և սկսեցին ջոկ-ջոկ խաղ անել: Բայց մենակ սկսած խաղը կերկար կէքաշեց. նրանք շուտով վէր գցեցին իրանց խաղալիքները:

Ինչի՞ մանուկները չչարունակեցին իրանց խաղը: 3

5. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Ուտելիք՝ հաց, գաթայ, բաղարջ, արգանակ¹⁾, փլաւ, խորոված, տապակած, մածուն, կարագ, իւղ, սեր, կարկանդակ²⁾, կուտապ³⁾. . .

Խմելիք՝ ջուր, թէյ, սուրճ, գինի, գարեջուր, կաթ . . .

Հացն ուտելիք է: Զուրը խմելիք է: Գրեզը. գնդակը. գաթան. կաթը. մատիտը. մածունը. սուրը. քարէ-գրեզը. հողը. գրչահատը. փլաւը. գինին. խորովածը. գարեջուրը. արգանակը. պարսիմատը⁴⁾:

1) Սուպ: 2) Պիրաժօկ: 3) Պիրօզ: 4) Սուխարի:

Առածներ:—Հացն ուտելով, բանն անելով:—Աղ ու հաց, սիրտը բաց:—Հաց ու պանիր, կեր ու բանիր:—Մի բաժակ ջուր, ու ուզի տնւր:

Հանելուկներ. 1. Ծերմակ տակառիկ, մէջն երկու կերպ ըմպելիք:—Օրան-օրան շուռ է գալիս, ոտներ չունի՝ ման է գալիս, բերան չունի՝ կուլ է տալիս:


6. Հ Ա Յ Ե Ի Զ Ո Ի Ր

I

Մարդուս գլխաւոր ուտելիքը հացն է: Հացը պատրաստում են ալիւրից: Առաջ ալիւրը մաղում են, յետոյ տաք ջրով շաղախում, խմոր են շինում: Խմորը շաղախելիս՝ հետը թըթ-խմոր են խառնում: Թըթ-խմորին ասում են խաշ: Ջաղախած խմորը լաւ հունցում են և ծածկում: Հունցած խմորը քիչ-քիչ քացախում է տաշտի մէջ՝ գալիս է: Տանտիկինը վերցնում է եկած խմորը, գնդում է և այդ գնդերից հաց է թխում թոնդրի կամ հնոցի մէջ: Հնոցին փուռն են ասում:

II

Ջուրը մարդիկ չեն պատրաստում: Նա այնքան հարկաւոր է, որ Աստուած ինքը առատութեամբ բաշխում է հարուստին էլ, աղքատին էլ: Մարդիկ խմելու ջուրը վեր են առնում աղբիւրներից և գետերից: Ուր որ աղբիւր կամ գետ չկայ, մարդիկ գետինը խոր քանդում են, ջրհոր են շինում և այդ ջրհորի ջուրն են խմում: Առանց ջրի մարդը չի կարող ապրել. կենդանիներն էլ կըկոտորուեն, եթէ ջուր չլինի:



7. Ա Ք Ա Ղ Ա Ղ

Դու ինձ ասա՛, աքաղաղ,
Ոսկէ կատարիդ մատաղ,
Կարմիր միրուքիդ մատաղ,
Ինչի ես շուտ արթնանում,
Բարձր-բարձր երգ ասում,
Քաղցր քուռս խանգարում:

8. Ա Ղ Օ Թ Ք

Հայր մեր, որ երկնքումն ես, սուրբ լինի Քո անունը. գայ Քո թագաւորութիւնը. լինի Քո կամքը երկրի վրայ, ինչպէս երկնքումն է. մեր ամենօրեայ հացը այսօր էլ տո՛ւր մեզ. ներիր մեզ մեր պարտքերը, ինչպէս որ մենք ներում ենք մեր պարտապաններինը. մեզ փորձանքի մի տանիր, այլ ազատիր մեզ շարից, որովհետեւ Քոնն է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը այժմ և յաւիտեան:



9. ՋԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ՆԱԻԵՐ, ԿԱՌՔԵՐ

Ջ ի ն ու թ ի լ ն ն ե ը՝ եկեղեցի, ուսումնարան, տուն, պալատ, խրճիթ, գոմ, ախոռ, կալ, մարագ, ջրաղաց . . .

Ն ա լ ե ը՝ մակոյկ, նաւակ, շոգենաւ, առագաստանաւ . . .

Կ ա ո ը ե ը՝ սայլ, սայլակ, սահնակ, կառք, շոգեկառք, հանրակառք*):

Տոմար շինութիւն է: Մակոյկը ֆնաւ է: Տետրակը դասական առարկայ է: Փլատը. սահնակը. գրչահատը. եկեղեցին. շոգենաւը. ամբարը. թէյը. խորովածը. գոմը. ջրաղացը. սայլը. գրատախտակը. քարէ-տախտակը. պալատը. խրճիթը . . .

Առածներ:—Մինչև ֆոյլը շուռ չի անցնիլ, ճամպէն չի գրըստուիլ:—Իմացողին մին, շիմացողին հաղար:

Հանելուկներ:—1. Անջուր ջաղաց, անկրակ բաղարջ:—
2. Չորս եղբայր են, միմեանց յետեւից վազում են, բայց իրար չեն հասնում:

*) Օմնիբուս:

10. Մ Ե Ր Տ Ո Ւ Ն Ը

Մեր տունը մեծ չէ. նա երեք սենեակ ունի և մի խոհանոց: Սենեակներից մէկում մենք դաս ենք սովորում. երկրորդ սենեակում ճաշում ենք. նրա մէջ դարսած են շատ աթոռներ, մի մեծ սեղան և մի պահարան: Ամենից մեծ սենեակում մենք քնում ենք: Դա կոչւում է ննջարան:

Մեր տան բակը շատ մեծ է: Բակի աջ կողմը փոքրիկ պարտէզ կայ, իսկ ձախ կողմը շինած է գոմը: Բակում է լինում մեր տան հաւատարիմ պահապանը՝ շունը:



11. ՆԱԳԱՍՏԱԿ

Մի վագիր այգչափ արագ,
Ի՛մ սիրունիկ նապաստակ.
Չատ պստիկ ես տակաւին,
Թաթիկներդ կը յոզնին:

Քեզ կը բերեմ կաթն ու հաց,
Չարքեջրով համեմած,
Ուտես, խմես, գորանաս,
Բանից կարօտ չըմնաս:

Ծանր-ծանր կը քայլես,
Սիրտս վեր-վեր կը հանես,
Կ'արձակեմ քեզ, երբ ուզես,
Կ'երթաս, ազատ կ'արածես:


12. Կ Ա Տ Ո Ւ Ի Խ Ր Ա Տ Ը

Որսի շունը մի նապաստակ էր բռնել: Կատուն տեսաւ և ասաց. «Ի՜նչ անգութն ես. մեղք է, բայց թող»:

Այդ միջոցին մի փոքրիկ մուկը անցաւ նրանց մօտից: Կատուն վրայ վագեց, բռնեց և խեղդեց:

«Այդ ի՜նչ արիր, ասաց շունը. մեղք գործեցիր, ընկեր»:

—Ոչինչ, պատասխանեց կատուն. իմ խեղդածս մի չնչին մուկն էր միայն:



13. Գ Ո Ր Ծ Ի Ք Ե Ի Ս Ա Ր Ք

Գ ո Ր Ծ Ի Ք՝ դանակ, գլալ, պատանաքաղ, ասեղ, քորոց, մկրատ, կացին, մուրճ, սղոց, արօր, գութան, ցաքան, գերանդի, մանգաղ, թի, բահ, թուր, ուրագ . . .

Ս ա Ր Ք՝ սանձ, թամբ, փորքաշ, ասպանդակ, կապ¹, կրծկալ², թիկնափոկ³:

1) Նոխտայ: 2) Զիւլ լուծը, վզնոցը: 3) Խամուտ:

Դանակը գործիք է: Սանձը սարք է: Սայլը կտոր է: Արօրը. կաթը. թամբը. մանգաղը. սպասը. փորքաշը. բահը. ուրագը. կրծկալը. մկրատը. եկեղեցին. պատանաքաղը. գերքը. սղոցը. հողը . . .

Առածներ:—Յղի գլխին բռունցքով տալ չի լինիլ:—Ուրագն իր կոթը չի տաշիլ:

Հանելուկներ:—Տապանը փայտ է, մեռելն երկաթ է. երբոր ձայն կրտայ, աշխարհ կըթնդայ:—Փտած փայտը փորեցին, առիւծը մէջը թաղեցին:

14. Մ Ե Ր Ը Ն Տ Ա Ն Ի Ք Ը

Ես մի փոքրիկ երեխայ եմ: Ես ունիմ հայր ու մայր: Հայրս ու մայրս ինձ շատ են սիրում: Ես երկու քոյր և մի եղբայր էլ ունիմ: Ծնողքս նրանց էլ են շատ սիրում: Հայրս ու մայրս մեզ կերակրում են: Նրանք մեզ ուտելիք ու հագնելիք են տալիս: Նրանք մեզ պահում, պահպանում են: Մենք շատ ենք սիրում մեր ծնողներին և նրանց պատուէրները կատարում ենք:

15. ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

«Փանք: Ստեղծողիս, որ քուն անուշիկ Տուաւ իմ աչքիս, արթնացրեց հիմիկ. Ծագեց իմ վրայ սիրունիկ արև, Մայրիկս տուաւ ինձ քաղցրիկ բարև. Հայրս համբուրեց, առաւ ինձ գիրկը, Ինչպէս հովիւր—փոքրիկ գառնիկը»:
«Աստուանձ իմ և Տէր, մինչև այս կէտիս Գու ես պատրաստել իմ ամեն բարիս, Տնւր որ անմեղիկ մնամ մշտական, Հատին սիրելի, Քեզ հաճոյական»:

16. ՀԱՄԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԵԱՆՔ Է

Քոյր ու եղբայր այգի գնացին: Եղբայրը խակ պտուղներ էր ուտում: «Մի ուտիր, Պետօ, ասում էր քոյրը. վնաս կը տայ, մի ուտիր»:

Պետրոսն ականջ չարեց, խակ պտուղներ կերաւ, հիւանդացաւ: Քոյրը նրան անանուխի կաթիլներ խմացրեց, մանանեխ շաղախեց, փորին դրեց և ցաւն անցկացաւ:

Մի օր էլ նրանք հանդը գնացին: Եղբայրը վազվզեց, թռչկոտաց, քրտնեց և կօտեցաւ աղբիւրին, որ սառը ջուր խմէ: «Մի խմիր, ասաց Մարիամը. թող քրտինքդ ցամաքի, յետոյ կը խմես»:

Եղբայրն ականջ չարեց, սառը ջուրը խմեց, մրսեց և սկսեց դողացնել: Բժիշկն եկաւ և Պետրոսի համար դառը դեղ գրեց:

Չմեռնաղէմ Պետրոսն ու Մարիամը գնացին գետի ափը մանդարու: Գետը ծածկուել էր բարակ սառուցով: «Մնա՛րօ, ես ուզում եմ սառուցի վրայ սղզամ, խաղամ»: — 2է, Պետօ, մի սղզար. սասուցը բարակ է. կը կտորուի, ջուրը կ'ընկնես», ասաց Մարիամը: Պետրոսը այս անգամ էլ ականջ չդրեց քրոջ՝ խրատին և թռաւ—սղզաց սառուցի վրայ:

Յանկարծ սառուցը կտորուեց և մեր անհամբեր մանուկը ջրի մէջն ընկաւ ու խեղդուեց:



17. ԿԱՐԱՍԻՔ ԵՒ ԱՄԱՆԵՐ

Կարասիք՝ սեղան, աթոռ, բազկաթոռ, գահաւորակ¹, բազմոց², մահճակալ, օրօրոց, պահարան, նստարան:

Ամաններ՝ գաւաթ, ախտէ, բաժակ, կուժ, կուլայ, հեշտանե³, կաթսայ, շիշ, սրուակ⁴, թաւայ:

Սեղանը կարասիք է: Դաւաթն աման է: Ախտէն. բազկաթոռը. գահատրակը. բաժակը. արօրը. կաթսան. տունը. սայլը. օրօրոցը. շիշը. արգանակը. գնդակը. նրստարանը. գինին. տետրակը. գրչահատը. դանակը. շոգեխաւը. շոգեկառքը . . .

Առածներ.—Մյ կուժ, քեզ ասեմ, այ կուլի, դու իմացիր:—Մի բաժակ ջուր, ով ուզի տուր: Կուժը ջրի ճանապարհին կը կտորուի:—Աւելորդ կահ-կարասի՝ պատճառ է շատ վնասի:

Հանելուկներ:—1. Չորս եղբայր մէկ գտակի տակ, կարծում եմ որ չգտար:—2—Վերեւից երդիկ, ներքեւից դոնակ, մէջտեղումը ջուր ու կրակ:

1) Դիւան, 2) կուշտկայ, 3) սամալար, 4) պուզիրօհ, ֆլակօն:

18. Ա Թ Ո Ռ Ե Ի Գ Ա Ի Ա Թ

Աթոռը շինում են փայտից: Աթոռն ունի չորս ոտք, նստատեղ և թիկունք: Նստատեղը հիւսուած է ծղօտից, բայց տախտակից կամ փափուկ կտորից էլ է լինում: Աթոռ շինողին ասողձագործ են ասում:

Գաւաթը շինում են կաւից: Կաւը բարակ մազում են, շաղախում, հունցում և ուզած ձևը տալիս: Չաղախը ցամաքում է արևի տակ: Յամաքած գաւաթները դնում են հնոցի մէջ և սաստիկ կրակ են վառում տակը: Տաքութիւնից կաւը կարծրանում է: Գաւաթ շինողին բրուտ են ասում:

19. Ա Ր Ե Ի

«Արև, արև, դուրս արի,
Քեզ բերել ենք աչքալոյս.
Քո քուրիկը, լուսընկան,
Բերաւ չամիչ մէկ աման:
Ամպը եկաւ, մութ արաւ,
Արևն աչքերէս կորաւ:
Բաց երեսըդ, արեգակ,
Մէկ բուռ չամիչ քեզ կըտանք»:
— Թխ, արևին խաբեցինք,
Ամպի տակից հանեցինք:

20. Լ Ե Ի Ո Ն Ի Վ Ա Խ Ը

Լեռներ վախկոտ տղայ չէր, բայց հաւատում էր դատարկ բաների: Մի երեկոյ նա մթնով տուն եկաւ: Տանը մարդ չկար: Վառարանի մօտ դրած էր խմորի դաշտը:

մայրը խաշ էր արել, դրել էր կրակի մօտ, որ քացախի: Լեռներ մօտեցաւ կրակին. այդտեղ մի բան պըճալընում էր, ձայն էր հանում: Լեռներ մտածեց. «Քաջք կը լինի»: Նա ուզեց հեռանալ. հակառակի պէս կրակախառնին ոտի տակն ընկաւ, ծայրը դիպաւ ճակատին: «Քաջքը...» դռաց Լեռներ և դուրս թռաւ սենեակից. բայց դուրս փախչելիս տրխի ծուպը դռան տակովն եղաւ:

Լեռներ փռուեց շէմքի վրայ . «Վայ, նանի, վայ, օգնեցէք, ազատեցէք. քաջքերը բռնել են ինձ»:

Դրացիք լսեցին Լեռնի ձայնը, եկան, բարձրացրին կիսակենդան տղային: Յետոյ ինքը Լեռնն էլ շատ ամաչեց, երբ նրան հասկացրին, թէ ինչ դատարկ բաներից է վախեցել:

21. Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր


Չորքոտանիք՝ ձի, կով, ոչխար, գայլ, արջ, կատու, շուն, փիղ, առիւծ . . .

Թռչուններ՝ ծիծեռնակ, սոխակ, հաւ, բադ, սագ, հնդուհաւ, արծիւ, ցին, բու . . .

Ձկներ՝ կարմրախայտ, իշխան, կողակ, գեղարքունի, տառելս, օրագուլ, կապուտ . . .

Սողուններ՝ օձ, մողես, գորա, կրիայ . . .

Միջատներ՝ մեղու, ճանճ, մոծակ, մրջին, մորեխ, բզէզ, կարիճ, թիթեռ . . .




Չին ընտանի կենդանի է, իսկ ծօ՞ր... Մողեսը սողուն է, իսկ մեղուն... Նապաստակը չորքոտանի կենդանի է, իսկ ծնծողուկը... Գեղարքունին ծովն է, իսկ կովը... Արտուար թռչուն է, իսկ մրջինը... գրատախտակը դասական առարկայ է, իսկ հյուր... Սուրճը խմելիք է, իսկ պանիրը... Մահճակալը կարասիք է, իսկ ասեղը...

Առածներ:—Չան հետ ընկերացիր, փայտը ձեռից մի գցիր:—Գայլի անունն է կտրած, աղուէսը աշխարհ քանդեց:—Նղուէսի դունչը խաղողին չհասաւ, ասաց՝ խակ է:

Հանելուկներ:—1. Քարը քարի վրայ՝ քար չէ, արածում է՝ տաւար չէ, ծու է ածում՝ հաւ չէ:—2. Մէկ շէնք ունիմ՝ քարձր ու շարժուն, ներքեւն ունի չորս հատ հաստ սիւն, մի դուռ փոքրիկ՝ նեղ գալարուն, վրան շքեղ մի վերնատուն:

22. Ե Ր Կ Ո Ի Ա Ք Ա Ղ Ա Ղ

Երկու արագադղ կռուեցին և մինը յաղթեց միւսին: Նա՝ որ յաղթուեց, փախաւ, սրահի տակը մտաւ. իսկ նա՝ որ յաղթեց, բարձրացաւ կտուրը և հպարտ-հպարտ «ծուղ-բուղու» կանչեց: Այդ բուղէին արժիւր թռչում էր վերևից. նա տեսաւ հպարտացող արագադղին, յափշտակեց նրան ու տարաւ, անուշ արաւ:



23. Պ Ա Ռ Ա Ի Ն Ո Ի Ա Յ Ծ Ը

(Մանկական երգ)

Կար-չրկար երբեմն
 Աղքատ մի պառւիկ.
 Ունէր մեր պառաւը
 Կաթնատու այծիկ,
 Զայիկ-մայիկ
 Կաթնատու այծիկ:

Պառաւը ձմեռը
 Այծիկը պահեց,
 Իր բերնի պատառը
 Նըրա հետ կիսեց,
 Սիրով, յօժար
 Նըրա հետ կիսեց:

Երբ ձիւնը հալուեց,
 Բուսաւ կանաչ խոտ,
 Պառաւն իր այծիկը
 Գուրս տարաւ արօտ,
 Ուրախ-գուլարթ
 Գուրս տարաւ արօտ:

Յանկարծ փըչեց քամին,
 Մըթնեց երկինքը,
 Թանձըր մառախուղը
 Պատեց գետինքը:
 Վայ,-վայ, վնայ-վնայ,
 Պատեց գետինքը:

Պառաւը խիստ տխրեց.
 Գայլն ուրախացաւ՝
 Այծի անուշ մտով
 Փորին դեղ արաւ,
 Կերաւ, լափեց,
 Փորին դեղ արաւ:

Պառաւը կանգնած էր
 Փռնջ խոտը ձեռին,
 Անխիթար ձայնով
 Կանչում էր այծին.
 «Եկ,—եկ,—եկ,—եկ»,
 Կանչում էր այծին:

24. Ա Ղ Ո Է Ս Ն Ո Ի Ա Ա Պ Ա Ր Ը

Աղուէսը վայրենի կենդանի է. նա միս է ուտում:
 Ճագարն էլ վայրենի կենդանի է, բայց խոտ է ուտում:
 Աղուէսը գետինը ծակում է, իրան համար բուն է
 շինում: Ճագարն էլ է գետնի տակը բուն շինում:
 Աղուէսի որջը մեծ է լինում և ունենում է շատ մուտ-

քեր: Ճագարի որջը փոքր է լինում, որովհետև նա ինքն
 էլ փոքր է:

Աղուէսը ճագարին թշնամի է:

Մի անգամ աղուէսը մօտենում է ճագարի որջին և
 ասում է. «Ճագար, ինչի ես խոր փոսի մէջ մտել. դուրս
 արի այդ ժուլթը ծակից, արածիր պայծառ արևի տակ»:

—Ճնորհակալ եմ,—պատասխանում է ճագարը. երբոր
 այդտեղից կըհեռանաս, խրատդ կը լսեմ ու դուրս կը
 դամ: Բայց քանի որ այդտեղ ես, հանգիստ կընստեմ
 բնիս մէջ. քո բարեկամութիւնից ես միշտ փախչում եմ:



25. Բ Ո Յ Ս Ե Ր

Ծ ա ու ե Ր՝ հացի, կաղնի, լորենի, խնձորի-
 խնձորենի, տանձի-տանձենի, ընկուզենի, թզենի,
 թթենի . . .

Թ փ ե Ր՝ մորենի, վարդենի, մոշի, մասրի . . .

Բ ա ն ջ ա Ր ե ղ Է Ն՝ սիսեռ, լոբի, սոխ, բողկ . . .

Հ ա ց ա Բ ո յ ս ե Ր՝ ցորեն, հաճար, գարի, վար-
 սակ, կորեկ, բրինձ . . .



Խոտեր՝ անանուխ, ուհան, եղինջ, թըր-
թնջուկ, աւելուկ . . .

Ծաղիկներ՝ մանուշակ, շուշան, յասմիկ¹⁾,
նարգէս, շահոքրամ²⁾, քրքում³⁾ . . .

Սուկեր՝ կարմրասուկոն⁴⁾, ոչխարասուկոն⁵⁾,
գայլասուկոն⁶⁾, անտառասուկոն . . .

Խնձորենին ծառ է, իսկ վարդենին թուփ է: Անանու-
խը խոտ է, իսկ սիսեռը բանջար է: Ցորենը հացաբոյս է,
իսկ բողկը... Լորին բանջար է, իսկ գարին... Սամիթը
խոտ է, իսկ քրքումը... Կեռասը պտուղ է, իսկ կեռասե-
նին... Ընկուզենին ծառ է, իսկ ընկոյզը... Կորեկը հացա-
բոյս է, իսկ սիսեռը...

1) Եասաման, 2) մեխակ, 3) գափրան, 4) փորը կարմիր է 5) սպե-
տակ մտալի, ուտելու սունկ, 6) նիհար, թունաւոր սունկ:

Առածներ:—Ծառն արմատից կը չորանայ:—Պտղատու ծառը
գլուխը կախ կը պահի:—Մի ծաղկով գարունը չի լինիլ:—Բարի ծա-
ռը բարի պտուղ կը բերի, չար ծառը չար պտուղ կը տայ:—Ամեն
ծառ իր պտղից կը ճանաչուի:

Հանելուկներ:—1. Է նա կանաչ կոճակ կոչոր, մաքուր
հիւթով լցուած տկճոր, կարմիր մեղուք ներսը բոլոր, Եղբայր,
դու կեր իբր մեղրի ծոր:—2. Բռնեմ ափովս, շաղ տամ՝ թա-
թովս, մեռնի տարով, ապրի բարով:—3. Ոսկէ կճուճիկ, մի-
ջուկն անուշիկ:

26. ՄԱՆՈՒՂԱԿ

Կապոյտ գլխով, հիւանաչ ոտով
ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թագկացած,
Բայց իմ փունջքս ամենի տան՝
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև գարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն գարնան գուշակ.
Իմ անունըս է մանուշակ:

27. ՅՈՐԵՆԵՒԻԳԱՐԻ

Գիւղացին երկու օրավար հող ունէր: Մի օրավարում
նա ցորեն ցանեց, միւսում՝ գարի: Արտերն աճեցին, բար-
ձրացան, հասկեր գցեցին: Մի օր գարին սկսեց խօսել.
«Ցորեն եղբայր, ասաց նա, վատ տեղ է ցանել մեզ մեր
տէրը. այս գիւղը շատ աղքատիկ է՝ ոչ ոսկի ունի, ոչ
արծաթ, ո՞վ պէտք է մեր յարզը ճանաչէ, մեզ գին տայ:

Արբի, ցորենն (եղբայր, թողենք հեռանանք այս գիւղից. արբի գնանք այնտեղ, ուր ոսկի շատ կայ):

Յորենը լսեց դրացու խօսքերը և ասաց. «Չատ ավտոսում եմ, գարի եղբայր, որ միայն քիստդ ես երկաբացրել, իսկ խելքդ կարճ է մնացել. ինչի մենք մանգանք ոսկու ետեից. մեր արժէքն այնքան մեծ է, որ ոսկին ինքն իրան մեր դուռը կըզայ»:

28. Ա Ն Չ Ր Ե Ի

Անձրև, անձրև, ցած արի,
Բըսցո՛ւր ցորենն ու գարի,
Բըսցո՛ւր ծաղիկ, կանաչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ օդ:
Անձրև, անձրև, ցած արի,
Գալըդ ամենիս բարի:

29. Հ Ա Ն Ք Ե Ր

Թ ա ն կ ա գ ի ն մ ե տ ա լ ն ե ը՝ ո ս կ ի, պ լ ա տ ի ն, արժաթ . . .

Հ ա ս ա ը ա կ մ ե տ ա լ ն ե ը՝ երկաթ, պղինձ, արճիճ, կլեկ . . .

Թ ա ն կ ա գ ի ն ք ա ը ե ը՝ աղամանդ, զըմբուխտ, յակինթ . . .

Հ ա ս ա ը ա կ ք ա ը ե ը՝ աղաքար, որձաքար, չէչաքար, աւաղաքար, կայծաքար, կրաքար . . .

Հ ո ղ ե ը՝ սևահող, աւազահող, կաւ, կիր . . .

Ի՞նչ է անում վարժապետը. աշակերտը. քահանան. հողագործը. վաճառականը. հովիւը. իրսորդը. ձկնորսը. քրոնտը. քարտանշը. կոշկականը. ձիւն. կո՛վը. մեղոն. շոնը:

Առածներ:—Ապրի կայ՝ երկաթ է, ապրի կայ՝ արծաթ է:— Ոսկին փոքր է, բայց գինը մեծ է:

Հանելուկներ:—1. Երկու եղբայր խիստ որոնուած, երկուսն էլ մէկ մօրից ծնուած. մեծի փոքր է պատիւն ու գին, փոքրը յարգի ու թանկագին:—2. Կլորակ, դեղին՝ աշխարհի սիրելին:

30. Ո Ս Կ Ի Ն Ե Ի Ե Ր Կ Ա Թ Ը

Ոսկին և երկաթը վիճում էին միմեանց հետ:

«Ես ամենից լաւ մետալն եմ, ասում էր ոսկին. ամենքը գտնում են ինձ, պատիւ են տալիս, ամենքը սիրում են ինձ. մարդկանց համար ես փող էլ եմ, դարդարանք էլ. ինձանից շինում են՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակներ, մատանիք, քորոցներ... Էհ, էլ ինչ երկաբացնեմ, առանց ինձ մարդու կեանքը կեանք չէ, այլ տանջանք է: Եթէ ուզենամ՝ ամբողջ աշխարհը մենակ կը գնեմ»:

Երկաթն ասաց. «Չատ ես պարծենում, ոսկի աղայ, և իրաւունք էլ ունիս. մարդիկ քեզ շատ են երես տալիս: Բայց մենակ դու չես աշխարհի տէրը. երբ մարդս ուզում է ապահով ապրել, նրան երկաթ է հարկաւոր. սուն շինելու համար ոսկէ կացնով չեն կտրում փայտը. հաց ունենալու համար ոսկէ արօրով չեն վարում հողը. գազաններից պաշտպանուելու համար ոսկէ հրացան չեն բանեցնում: Թէև դու, ա՛ղա ջան, կարող ես աշխարհ գնել, ես էլ, լաւ գիտենաս, կարող եմ բոլորը ձեռքիցդ խլել»:

31. Մ Ա Ր Դ

Մարմնի անդամները՝ գլուխ, պարանոց, բուն, ձեռներ, ոտներ:

Գլխի մասերը՝ գագաթ, ծոծրակ, քունք, ճակատ, դէմք:

Դէմքի մասերը՝ յօնքեր, աչքեր, քիթ, թշեր, բերան, կզակ:

Ձեռների մասերը՝ դաստակ, արմունկ, ուս:

Ոտների մասերը՝ ազդը, սրունք, դարշապար:

Բնի մասերը՝ կուրծք, վոր, կողքեր, թիկունք, մէջք:

Գլուխը մարմնի մասն է. դէմքը. աչքը. ծոծրակը. քունքը. գագաթը. ձեռները. կզակը. ոտները. ճակատը. յօնքերը. քունքը. թշերը. պարանոցը. քիթը. աչքերը...

Դիրքը դասական առարկայ է. ջուրը. գնդակը. սեղանը. կացինը. խորովածը. կովը. նապաստակը. կատուն. թրթնջուկը. վարդենին. խնձորենին. օձը. գորտը. միծակը. երկաթը. ծառը. քարը:

Առածներ—Աստուած ձեռք է տուել՝ բան շինելու համար:— Հացն ուտելով, բանն անելով:—Բանի անունը տալիս՝ գլխի ցաւը բռնում է:—Ծոյլ մարդու ձեռները միշտ փլաւ են ուտում:—Մի ձեռը ծափ չի տալ:—Մարմնի ճրագն աչքն է:

Հանելուկներ:—Մէկը կանգնած խօսում է, երկուսն ականջ են դնում, իսկ երկուսը նայում են:—2. Երկու սենեակ մի սիւնանի:

Շուտասելուկ:—Փոկակապ Յակոբ ապէր, թէ կարաս մի փոկ կապես, ես քեզ կասեմ՝ շնորբդ շատ, փոկակապ Յակոբ ապէր:

32. Ե Ր Կ Ո Ւ Է Ո Վ Ի Ի

Պետրոսն ու Կարապետը դաշտից տուն էին գալիս: «Դիտես, Պետրոս, ասաց Կարապետը, եթէ քո ոչխարներից մէկն ինձ տաս, իմ հօտը քոնիցը երեք անգամ շատ կը լինի»:

—Ո՛չ, պատասխանեց Պետրոսը, աւելի լաւ է՝ դու քո ոչխարներից մէկն ինձ տուր, այն ժամանակ մենք հաւասար կ'ունենանք:

33. ԵՐԵՎԱՆԻ ԵՂՈԹԻ

Տէր Աստուած իմ, Տէր բարերար, Դու պահպանիր ինձ այս գիշեր, Տուր հօրս և մօրս կեանք երկար, Հանգրստութիւն ու լաւ օրեր:

Քո սուրբ հրեշտակդ մեր մօտից
Չըհեռանայ ամենեկին,
Այլ պահէ միշտ փորձանքներից,
Արթնացրնէ զուարթագին:

34. Ո Չ Խ Ա Ր

1. Գարնան վերջերում հովիւր խուզեց իր ոչխարները: Դեռ ցուրտ էր և խեղճ կենդանիները դողդողում էին:

Աստուած խղճաց ոչխարներին և աշխարհ ուղարկեց արևի տաք ճառագայթներ ու ջերմ քամի: Ոչխարները տաքացան և ուրախ-ուրախ վագեցին դէպի դաշտը. իսկ աշունքադէմ նրանց բուրդը նորից դուրս եկաւ:

II. Մանուկներն ամբողջ ամառ ուրախ-գուարթ խաղում էին: Չմեռն եկաւ և նրանք չկարողացան առաջուայ պէս շուտ-շուտ դուրս վազել: Տխուր նստած էին լուսամուտի առաջ և նայում էին դէպի դուրս. դուրսն էլ ձիւնը քուլայ-քուլայ էր անում:

Աշնան ազատ օրերին մայրը ոչխարի բրդից թել էր մանել, շալ էր գործել. այդ թելից այժմ նա գուլպաներ ու թաթմաններ արաւ. շալից էլ շորեր կարեց:

Մանուկները տաք հագնուեցան, համարձակ դուրս վազեցին և ուրախ-գուարթ սկսեցին ձնագնդի խաղալ:

35. ԱԶՔԻ, ԲԵՐԱՆԻ, ԴԱՍՏԱԿԻ ԵՒ ԳԱՐԱԳՈՐԻ ՄԱՍԵՐԸ

Ա չք ի մ ա ս ե ռ ը՝ բիբ, ծիածան, սպիտակոց, կոպեր, արտևանունք:

Բ ե ռ ա ն ի մ ա ս ե ռ ը՝ շրթունք, ծնօտներ, լնդերք, ատամներ, լեզու, քիմք, կատիկ, կոկորդ, շնչափող:

Գ ա ս տ ա կ ի մ ա ս ե ռ ը՝ մատներ, ափ, մատնարմատներ:

Գ ա ը շ ա պ ա ը ի մ ա ս ե ռ ը՝ պատուանդան, կրունկ, մատներ, ճիտք:

Աչքը դէմքի մասն է, իսկ ընթր: Ափը ձեռքի մասն է, իսկ դէմքը: Գարշապարը ոտի մասն է, իսկ պատուանդանը: Դէմքը գլխի մասն է, իսկ գլուխը: Ծիածանը աչքի մասն է, իսկ մէջքը: Մորենին թոսի է, իսկ կաղնին: Կուժն աման է, իսկ փլւնը: Օձը սողուն է, իսկ մորեխը...

Առածներ:— Լեզուդ չուանի դիր:— Լեզուի տակին ոսկոր չկայ, որ սուտ ասելիս ծակի:— Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չհատաց:— Օձի կծածը կըսողանայ, լեզուի կծածը չի սողանալ:

Հանելուկներ:— 1. Փոքրիկ պատուհան՝ շեղջով լիքը:— 2. Չորս մայր կային նմանակ, ունէին հինգ-հինգ զաւակ. հինգը մէկ մօր էին որդիք, հինգը նրանց եղբոր-որդիք, տասն էլ մօրեղբոր-որդիք:

36. ԵՐԿՈՒ ԵՒ ՄԻ

Ա կանջդ երկու, ունիս մի բերան,
Հասկացիր դու լաւ.

Ա շխարհիս վերայ կը լսես շատ բան,
Ու խօսիր սակաւ:

Ա չքերդ երկու, ունիս մի բերան,
Հասկացիր դու լաւ.

Ա շխարհիս վերայ կը տեսնես շատ բան,
Ու պատմիր սակաւ:

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս,
Հասկացիր ինձ լաւ.

Ամբողջ ժամերով պիտի աշխատիս
Եւ ուտես սակաւ:

37. ԾՈՅԼԸ ԵՒ ՋԱՆԱՍԻՐԸ

— Այսօր խաղամ, վաղը կը սովորեմ, ասում է ծոյլը:
— Վաղը կը խաղամ, այսօր սովորեմ, ասում է ջանասէրը:

Ծոյլ աղջիկը.— «Բանն ինչ կ'անեմ՝ կեղտոտ է. բամբակը կորիզոտ է. մետաքս պիտի, որ մանեմ, մաստակ պիտի, որ ծամեմ. կտուրը տիտիկ անիմ, անցնողին մտիկ անեմ, ուտեմ, խմեմ, միթնի՛ քնեմ»:

Թոյլ տղան.— «Ձորերս հանիր, թեք գցիր, ծածկիր
ինձ ու խաշակները վրաս. յետոյ ես ինքս կը քնեմ»:

38. ԱՌԱՎԱՁԵՒ ԽՆԴԻՐ

Գիւղացին սայլով խոտ էր տանում. սայլի վրայ
կային նաև մի գայլ և մի գառը: Նա հասաւ գետի եզեր-
քը, բայց երբ ուզում էր կամրջից անց կենալ, պահա-
պանն առաջ եկաւ և ասաց. «Եթէ ուզում ես, որ թող
տամ առանց վարձի կամրջից անց կենաս, մի պայման
կայ, որ պէտք է կատարես. պէտք է ապրանքդ ջոկ-ջոկ
անցկացնես՝ գայլը, գառը և խոտը, բայց այնպէս, որ իրար
վնաս չհասցնեն»:

Ի՞նչ անէր գիւղացին. եթէ առաջ գայլը տանէր, գա-
ռը կ'ուտէր խոտը. եթէ խոտը տանէր, գայլը կը պատա-
ռոտէր գառնուկը: Մտածեց-մտածեց մեր գիւղացին և
իւր ապրանքն այնպիսի հնարքով անցկացրեց, որ մէկը
միւսին ամենևին վնաս չտուեց:

Հիմա իմացէ՛ք, թէ գիւղացին ինչպէս անցկացրեց իւր
ապրանքը:

39. ՈՐԹԻ ՊԱՆՈՂՆ ԱՍՏՈՒԱԾ Է

Փայլուն արևը արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց, թագ կացաւ.
Փոքրիկ աստղերը ամպի տակ մըտան,
Եւ ցուրտ ու խաւար գիշեր էր աշնան:
Ամեն մարդ գնաց, իր տունը հասաւ.
Ամեն երեխայ մօր գիրկը մտաւ.
Միայն խեղճ որբը չունի հայր ու մայր,
Չունի բարեկամ, ո՛չ քոյր, ո՛չ եղբայր.
Անտէր մընացած, Աստուծոյ կամքին,
Խեղճը ննջում է փողոցի միջին:

40. ՀԻՆԳ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Աչքով տեսնում ենք առարկան, ակնջով լսում ենք
նրա ձայնը, քիթով նրա հոտն ենք իմանում, լեզուով համը,
իսկ մատներով շօշափում ենք և իմանում նրա պնդու-
թիւնը, փափկութիւնը, թանձրութիւնը, նօսրութիւնը,
սառնութիւնը, տաքութիւնը, հարթութիւնը, անհարթու-
թիւնը . . .

Հնձում են (ինչո՞վ). քանդում են. քերում են. կտրում
են. սողոցում են. գրում են. երկաթը ծեծում են, սրում են.
կարում են. ձեւում են. փորում են. տողում են...

Առածներ:—Ականջն էնդուր չի մեծանում, որ շատ բան է լսում:
—Անհունար մարդու լեզուն երկար կը լինի:—Ուրիշի աչքը քեզ հա-
մար լոյս չի տալ:

Հանելուկ:—Փետուրով կը ցանեն, աչքով կը քաղեն, գըլ-
խով կ'ուտեն, մտքով կը մարսեն:

41. ԿԱՂՆ ՈՒ ԿՈՅՐԸ

Կաղն ու կոյրը պէտք է անցկենային մի սըընթաց
առուակով: Ի՞նչպէս անէին: Կոյրը կաղին շալակեց և եր-
կուսն էլ ապահով անցկացան:

42. Ա Ռ Ա Ի Օ Տ

Փայլուն ճաճանչով արևեկը բացուեցաւ.
Գետի մօտ գիւղի կրակը հանգաւ.
Դաշտի ծաղիկներ ցօղով ծածկուեցան.
Տաւար ու ոչխար արօտ դուրս եկան.

Թանձր մէգերը երկրից հեռացան.
 Ամեն կենդանիք դաշտը լցուեցան.
 Մարդիկ զարթեցան, գործը ձեռք առան.
 Արևը ելաւ, աշխարհ բերկրեցաւ:

43. Մ Ե Ղ Ո Ի Ն Ե Ր

Գարունն սկսուեց. արեգակը հալեցրեց դաշտերի ձիւնը. հին՝ դեղնած խոտերի մօտ դուրս եկան կանաչ խոտի բողբոջներ. ծառերի կոկոնները բացուեցան և փոքրիկ տերևներ առաջ բերին:

Ահա մեղուն էլ ձմեռային քնից զարթեց, բրդոտ թաթիկներով աչերը սրբեց, ընկերներին զարթեցրեց և միասին դուրս նայեցին լուսամուտից, որ տեսնեն, թէ ձիւնը, սառուցը և հիւսիսային ցուրտ քամին անցել են:

Մեղունները տեսնում են, որ արեգակը փայլում է, որ ամեն տեղ տաք է և լոյս. նրանք դուրս են գալիս փեթակից և թռչում են դէպի ծիրանի ծառը:

«Միրուն ծիրանի, մի բան չունիս խեղճ մեղուներիս համար. մենք երկար ժամանակ է քաղցած ենք»:

—Ո՛չ, պատասխանում է ծիրանի ծառը. դուք շատ շուտ էք դուրս եկել. իմ ծաղիկներս դեռ ևս պահուած են կոկոններիս մէջ: Գնացէք, նշենուն հարցրէք:

Մեղունները թռան, գնացին նշենու մօտ. «Միրելի նշենի, արդեօք մի բան չունիս սոված մեղուներիս համար»:

—Վաղը եկէք, սիրելիք, պատասխանում է նրանց նշենին. այսօր ինձ վրայ ո՛չ մի բացուած ծաղիկ չկայ, իսկ երբ բացուին, ես մեծ ուրախութեամբ կ'ընդունեմ ձեզ:

Թռան մեղունները կակաչի մօտ, նայեցին նրա փայլուն գլխին, բայց նա էլ ո՛չ հոտ ունէր և ոչ մեղր:

Մեղունները տրտում և քաղցած կամենում էին յետ գնալ տուն, բայց տեսան թփի տակ մի քնքոյշ մուգ-կապոյտ ծաղիկ: Սա մանուշակն էր, որ բաց արաւ մեղուների համար իր կոկոնները՝ լիքը անուշ հոտով և քաղցր հիւթով: Կերան-խմեցին մեղունները և ուրախ-գուարթ յետ դարձան տուն:

44. Մ Ե Ղ Ո Ի

Հա՛, ծաղեցաւ արեգակը,
 Հա՛, ծաղկեցաւ մանուշակը.

Մեղուն թողեց իր փեթակը
 Տրգտրգտով-տրգտրգտով:

Մեղուն թռաւ ծաղիկէ ծաղիկ,
 Մեղր առաւ քաղցր-անուշիկ,

Մոմը տարաւ հոտոտ-լուսիկ,
 Պրզպրզպտով-պրզպրզպտով:

Անուշ մեղրը՝ մանր տղոց,
 Գեղին մոմը՝ ամեն սրբոց,

Իսկ շարերին կրճ ու խայթոց,
 Կըսկըծալով-կըսկըծալով:

45. Մ Ա Ր Դ Ի Կ, Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր, Բ Ո Ց Ս Ե Ր, Հ Ա Ն Բ Ե Ր

Մ ար դ ի կ՝ հայր, մայր, եղբայր, քոյր, հէրբար *), քեռի, հօրաքոյր, մօրաքոյր, հարս, փեսայ, սկեսուր, սկեսար, տալ, աներ, զոքանչ, ծերունի, պառաւ, մանուկ, տղայ, աղջիկ, օրիորդ, կին, վաճառական, աղքատ . . .

*) Հէրբար—հօրեղբայր:



Կենդանիներ՝ զագաններ, թռչուններ, ձկներ, սողուններ, միջատներ, սարդեր . . .

Ռոյսեր՝ ծառեր, թփեր, հացաբոյսեր, խոտեր, բանջարեղէններ, սունկեր, մամուռներ:

Հանքեր՝ մետաղներ, քարեր, հողեր, աղեր:

Աղքատը մարդ է. թո՛ւփը. թո՛չո՛նը. գի՛րքը. սա՛րդը. մանուշակը. երկաթը. եղբայրը. ծա՛ռը. մամուտը. սո՛նկը. գանձանը. թո՛չո՛նը. խո՛տը. ա՛ղը. հայրը. օրի՛որդը. մետա՛լը. մե՛ղուն. հո՛ղը:

Առածներ:—Ինչ չի ծնում, նա չի մեռնում:—Երկաթը տաք-տաք կը ծեծեն:—Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

Հանելուկ:—Առաւօտեան չորս ոտի վրայ է ման գալիս, ճաշին՝ երկու, իսկ երեկոյեան՝ երեք:

Շուտասելուկ:—Ծիտը ճմբան ծէրին, ծտի ճուտի ճիտը ծուտ:

46. ՊՍԸԿՆԵՐ (պարերգ)

Մէկ սիրտ լինինք և մէկ հոգի,
Միութիւնն է զարդը կեանքի:
Ինչ խաղի մէջ որ գոհ լինինք,
Սէր-միութեան մենք պէտք ունինք:

ՎԱՐԴԷ ՊՍԱԿ

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեղութեան.
Թո՛ղ վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վըրայ:

ԿԱՂՆԵԱՅ ՊՍԱԿ

Կանաչ խոտը զաշտերի
Մեր սրտին է սիրելի.
Թո՛ղ ճիւղը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին:

ՄԱՆՈՒՇԱԿԷ ՊՍԱԿ

Ազնիւ, սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ գեղեցիկ,
Քո քնքոյշ հոտ անուշիկ:

ԲՈՒՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Սիրուն կանաչ պսակին
Թո՛ղ միանանք, բարեկամք,
Եւ յոյսերը անբաժան
Մընան մեզնից յաւիտեան:

47. օՐՈՒԱՅ ՄԱՍԵՐԸ, ՉԱԲԱԹՈՒԱՅ ՕՐԵՐԸ, ՏԱՐՈՒԱՅ ԱՄԻՍՆԵՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Օրուայ մասերը՝ ցերեկ, գիշեր, առաւօտ, կէսօր, երեկոյ, կէսգիշեր:

Ջաբաթուայ օրերը՝ կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:

Ամիսներ՝ յունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, յունիս, յուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր:

Տարուայ եղանակները՝ գարուն, լամառ, աշուն, ձմեռ:

Գարունը տարուայ եղանակն է. ցերեկը. կիրակին. ամառը. երեքշաբթին. գիշերը. չորեքշաբթին. առաւօտը. երկուշաբթին. աշունը. ուրբաթը: Օրը ժամանակի շափ է. շաբաթը շաբաթուայ վերջին օրն է. ուրբաթը. հինգշաբթին. ձմեռը. կիրակին . . .

Առածներ:—Էսօրուայ բանը էգուց մի գցիր:—Էսօրուայ փուշը, էգուցուայ նուշը:—Վեց օր գործիր, եօթներորդ օրը հանգստացիր:

Հանելուկ:—Մի մանուկ կար գօրեղ, հրեղէն՝ խմեց, հատցրեց ջուրը գետից. բոլոր մարդկանց արաւ նա քէն՝ հնձեց, վերցրեց խոտը դաշտից:

48. ԿԻՐԱԿՆԱՄՈՒՏ

Իրիկնաժամի զանգակը տուին,
Բարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.
Վաղը՝ կիրակի՝ Աստուծոյ օրն է:
Վերջացրէք գործերդ, հանգստեան ժամն է:
Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եղն ու գութանը.
Գիւղական փոքրիկ պարզ եկեղեցին
Լցուած մարդիկը աղօթում էին.
Դառը քրտնքով գնած մոմերը
Սրբերի առաջ մեղմ վառւում էին:

49. Ե՞Ր Բ Է Լ Ի Ն ՈՒ Մ

Ձիւնը հալում է, խոտը կանաչում, ծառերը ծաղկում, օրը երկարում:—Այս երբ է լինում:
Ամեններ անցան, օրերը տաքացան, ամպեր բարձրացան, անձրև թափեցին: Արտերը հասել են, հնձող են կանչում:—Այս երբ է լինում:
Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը բարձրից է թափւում և մութ գիշերը շորս կողմդ բռնում:—Այս երբ է լինում:
Դաշտ ու ձոր անձ ձիւնով ծածկուեցան, ծառերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ ներս մտան իրանց տները, իսկ զագանները—իրանց բները: Դուրսը սասուկութեամբ քամի է փչում և ձիւնի փոշիով աչքերդ լցնում:—Ասացէք, տեսնեմ, այս երբ է լինում:

50. Զ Ի Ի Ն

Երբ որ ձին կրգայ, ես կ'ուրախանամ,
Որ դուրս պիտ' գրնամ, դահուկ պիտ' խաղամ...
Բայց տեղս որքան աղքատ տղայք կան,
Որ տաք հայաւի կարօտ կրմնան:

51. * * *

Զին է գալիս փաթիլ-փաթիլ,
Աղքատն ասաց՝ տունս է ըսթիլ*):
Պառան ասաց՝ մոզիս կորաւ,
Գայլն ասաց՝ փորիս դեղ է:

52. Մ Ա Յ Ի Ս

Մենք արժանացանք ուրախ մայիսին,
Ծառեր, ծաղիկներ ողջ կանաչեցին.
Կապոյտ երկնքում փոքրիկ ամպերը
Ուրախ ու գուարթ առաջ վազեցին:

Տերեւատ ծառի ստուերների տակ
Թռչուններն իրանց երգերն են երգում,
Կանաչ դաշտերի փափուկ մարգերում
Պէսպէս կենդանիք ուրախ արածում:

*) Բաթիլ—քանդուած, կործանուած:

53. ԶՈՐՍ ՅԱՆԿՈՒԹԻՒՆ

1. Զմեռն էր: Գետը ծածկուել էր սառուցով: Գարե-
գինը իւր ընկերների հետ խաղում և սղղում էր հաստ
սառուցի վրայ: Բաւական խաղալուց յետոյ նա ուրախ-
ուրախ տուն վազեց և ասաց հօրը. «Ա՛խ, հայրիկ, ինչ
պատուական եղանակ է ձմեռը. որքան ուրախութիւններ
ենք անում մենք՝ ձնագնդի ենք խաղում, սղղում ենք սա-
ռուցի վրայ, սահնակներով զբօսնում ենք... Ա՛խ, ինչ կը
լինէր, որ միշտ ձմեռ լինէր»: Հայրը հանեց ծոցի տետ-
րակը և ասաց. «Գրի՛ր սրա մէջ քո ցանկութիւնը»: Գա-
րեգինը գրեց:

2. Զմեռն անցկացաւ: Գարունը եկաւ: Բացուեցան
ծառերի ծաղիկները. բարձրացան դաշտերի խոտերը.
ամենայն տեղ ոստոստում էին հազարաւոր թիթեռներ
ու բզէզներ: Գարեգինը դուրս գնաց դաշտը, ծաղիկներ
քաղեց, թիթեռներ բռնեց, իսկ երբ երեկոյեան տուն
եկաւ, ասաց հօրը. «Պէտք է իմանաս, հայրիկ, թէ որքան
ուրախացայ ես այսօր. ճշմարիտ, շատ հիանալի եղանակ
է գարունը և, եթէ ինձ մնար, ես կըրցանկանայի, որ
միշտ գարուն լինէր»: Հայրը հանեց տետրակը և առա-
ջարկեց Գարեգինն, որ իւր ցանկութիւնը գրէ: Գարեգի-
նը գրեց:

3. Ամառնացաւ: Գաշտերի խոտը հասել էր և հնձող
էր կանչում: Գարեգինն ու հայրը գնացին խոտ հնձելու-
Քանի որ հայրը վէր էր տալիս անուշահոտ խոտը, Գա-
րեգինն իր գուարճութիւններն էր անում—ձուկն էր բըռ-
նում գետիցը, հատապտուղներ էր հաւաքում, գլոր-
ւում էր հոտաւէտ խոտերի վրայ: Երեկոյեան, տուն յետ
դառնալիս, նա ասաց հօրը. «Ահա՛ այսօր ես անչափ ու-

ըախացայ. երանի թէ ամառը վերջ չունենար»: Գարեգնի այս ցանկութիւնն էլ գրուեց տետրակի մէջ:

4. Վերջապէս եկաւ աշունը: Այգիներում լաւ-լաւ պտուղները հասել էին՝ խնձորը, տանձը, սալորը, սերկեիլը, խաղողը... Մարգիկ դուրս էին եկել այգեկութի: Գարեգինն էլ իր ծնողների հետ գնաց այգի և քաղն սկսեցին: Պէտք էր տեսնել, թէ ինչպէս էր վազվզում նա մէկ ծառի տակից դէպի միւսը, ծիծաղում, երգում, խաղում և հատապտուղները բերանը դցելով՝ անուշ անում: Վերջը նա վազեց հօր մօտ, փաթաթուեց նրա պարանոցով և ասաց. «Հայրիկ, աշունը տարուայ ամենալաւ եղանակն է»: Այն ժամանակ հայրը հանեց փոքրիկ տետրակը և ցոյց տուեց, որ նա դարնան, ձմեռուան և ամառուան համար էլ միևնոյն բանն է ասել:

Պատմեցէք ձեր բառերով այս պատմութիւնը. ասացէ՛ք թէ քանի գլխաւոր կտորների կարող էք բաժանել սրան եւ ինչ է ասուած իւրաքանչիւր կտորում:

54. Տ Օ Ն Ե Ր

Աստուածամօր ծնունդը. Աւետումն. Քրիստոսի ծնունդը և Մկրտութիւնը. Տեառնընդառաջ. Ծաղկազարդ-Քրիստոսի Գալուստը. Զատիկ-Սուրբ Յարութիւն. Համբարձումն. Հոգեգալուստ. Վարդավառ. Վերափոխումն Աստուածածնի. Խաչվերաց...

Առաձներ:—Կարմիր ձուն Զատիկն կըսողի:—Տարին մի Զատիկ, այն էլ նաւակափր:—Ագռաւի բերանով Վարդավառին ձին կըզայ:

55. ՆՈՒՐԻՆ (Անձրեաքեր)

Նուրին-նուրին եկել է,
Աջրա-Հուրին եկել է,

Ջիլայ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է:
Ե՛ղ բերէք, վարսը քսենք,
Զնւր բերէք, գլխին ածենք.
Մեր նուրինի փայլ տուէք,
Ուտենք, խմենք, քէֆ անենք:

56. ՃՕԼԻ (Արեւաքեր)

Ճօլի-ճօլի, ճօլ չըկայ,
Խաւիժ անեմ, եղ չըկայ,
Ճօլին ընկել է ծովը,
Ծովիցը հանող չըկայ:
Չուան բերէք, դուրս հանենք,
Թո՛ղ բերէք, կցան անենք:
Չնւ բերէք, թաթին դնենք,
Ե՛ղ բերէք, վարսին քսենք:
Խոփը պատումն է ժանգոտել.
Չեիչը տափումն է ժանգոտել:
Կանաչ դաշտերին ենք կարօտ.
Կարմիր արեւին ենք կարօտ:

57. ՃԶԱՆԱԿ (Զատիկական երգ)

Ճ՛րը-ճ՛րը, ճչանակ,
Աստուծոյ դուռը բանանք.
Գուրսը ժամ ասենք,
Ներս գանք՝ պատարագ անենք.
Սև եզը մատաղ անենք,
Պոզերը չարգախ անենք,
Տակը նստենք՝ քարգահ անենք:

58. ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ԵՐԳԸ

Ալէլուիան, ալէլուիան.
 Հրրէս եկաւ մի ձիաւոր,
 Լախտը ձեռին քաջ ձիաւոր,
 Աչու ձեռին Աւետարան,
 Չախու ձեռին Սաղմոսարան.
 Աչով գրէր, ձախով ջրնջէր,
 Չախով գրէր, աչով ջրնջէր.
 Բանեկամ, երեսայիդ անունն ինչ է...
 Ձեր Յոյակը թախտին նստի,
 Փափուկ ձեռը ջէբը տանի,
 Հինգ արասին ջէբից հանի,
 Սուրբ Սարգսին մատաղ անի:

59. ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Ալէլուիան, ալէլուիան.
 Ձատիկը արեւուսով,
 Ջրօրնէքը ճրագլուսով.
 Թէ քնած էք, վեր զարթեցէք,
 Թէ զարթուն էք, լաւ լսեցէք.
 Մարիամ եկաւ լալով-լալով,
 Լալով-լալով, մղկըտալով,
 Լուսաթաթախ մանուկ ծընեց,
 Ծով ու ցամաք լուսով պատեց:
 Ձեր տունն է չորեքսիւնի,
 Չորս սիւներից սրն է սալի:
 Սալը չարակամի սրտին.
 Ասլի բարեկամի որդին.

Տունը շէն, տունը շէն:
 Ձեր տղայոց անունն ինչ է:
 — Շայկ ու Արամ է:
 Գրբանք նստեն մէկ սեղանի,
 Գինի խմեն նախջուանի.
 Ձեր թշնամուն գետը տանի,
 Գայլագուարը աչքը հանի.
 Մէկ պոչատ հաւ, մէկ ստիլ իւղ
 Տուէք, ալէլուիան տանի:

60. ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո,
 եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս
 և յերկրի. զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր.
 Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց
 պարտապանաց, և մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ
 փրկեան զմեզ ի շարէ, զի քո է արքայութիւն և զօրութիւն
 և փառք յաւիտեանս. ամէն:





ԵՐԲՈՐԳ ԶԲՁԱՆ

ԶՐՈՒՅՏՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԱՏ ԸՆԹԵՐՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

61. Ա Գ Ա Ն Զ Ո Ւ Ն

Մի շուն կար: Մի օր այդ շունը՝ մի կտոր միս բերանին, պէտք է անցկենար կամուրջով: Անց կենալիս՝ ցած նայեց ջրին և տեսաւ, որ մէկ ուրիշ շուն գնում է ջրի միջով՝ բերանին մի մեծ մսի կտոր: Զան ազահուլթիւնը շարժուեցաւ. նա ցած թռաւ կամուրջից և կամեցաւ միսի ձեռքից խլել մսի կտորը:

Բայց ինչ. ցած թռելիս՝ իւր բերանի կտորն էլ վէր գցեց, ջուրը տարաւ. ջրի մէջն էլ ո՛չ շուն կար, ո՛չ մսի կտոր. կենդանին խարուել էր իւր ստուերից: Ազահուլթիւնը զրկեց նրան իւր ունեցածից:

62. Ո Ւ Մ Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

Որդին. «Խնդրում եմ, հայրիկ, ասն ինձ, քննարկի, ինչո՞ւ ամեն օր եղբայրս Գրիգոր շուտ է վեր կենում. նա ո՞ւր է գնում. ինչո՞ւ մինչև ճաշ տուն չէ յետ դառնում»:

Հայրը. «Եղբայրըդ, որդիս, ամեն առաւօտ դպրոց է գնում և մինչև ճաշը այնտեղ է մնում. այնտեղ են գնում

և միւս մանուկներ, նորա ընկերներ. նրանք գնում են, որ ուսում առնեն և յետոյ բարի, խելօք մարդ լինեն»:

63. Է Զ Ը Ե Ի Զ Ո Ւ Ն Ը

Էջը խնդրեց շանը, որ միասին ճանապարհ գնան: Զունը համաձայնուեց: Ճանապարհին երկու ընկերները մի խոտաւէտ տեղ կանգնեցին: Երկուսն էլ յոգնած էին, երկուսն էլ սոված: Էջն սկսեց ախորժակով արածել կանաչ խոտը: Զունն ուտելու բան չունէր:

—Ընկեր, խուրջինումդ հաց շատ կայ, տո՛ւր ինձ մի կտոր, սոված մեռնում եմ:

«Խոտ շատ կայ այստեղ. կեր դու էլ ինձ պէս, ասաց էջը. հացը ես ուրիշներին համար եմ պահում»:

Զունը հոտոտեց խոտը, պոկեց մի քանի հատ, ծամծամեց ու վէր ածեց:—Ես խոտ չեմ ուտում, էջ բարեկամ, ասաց շունը. այդ կերակրին սովոր չեմ. աղաչում եմ՝ մի պատառ հաց տուր. անօթի եմ:

Էջն այս անգամ ականջ էլ չդրեց շան աղաչանքին. ինքը աջ ու ձախ հնձում էր անուշ խոտը և ուտում:

Այդ միջոցին թփերի տակից երևեցաւ գայլը—իշի թշնամին. նա համարձակ դուրս վազեց անտառից, բայց երբ տեսաւ շանը, կանգնեց, դունչը երկարացրեց և տրխուր ձայնով ոռնաց:

Էջը զարհուրեցաւ. «Իմ սիրելի, իմ պատուական ընկեր, ասաց նա. անս քեզ բոլոր հացը. կեր, անուշ արա, միայն թէ ազատիր ինձ չար գազանի ատամներից»:

Զունը երեսը շուռ տուեց:—Ի՞նչ արժանի չես, որ ես քո հացի պտուկը կտրեմ, ասաց նա. քաղցածութիւնն ինձ չի սպանիլ. ես կը մտնեմ անտառը, կերակուր կը գտնեմ. դու էլ, եթէ կարող ես, գլխիդ ճարը տես:

Ասաց ու հեռացաւ շունը: Մի բոպէի մէջ գայլը պատառտեց էջին:

64. Ա Ր Ե Ի

Արնւ-արեւ, նկ, նկ,
Զիզի քարին վէր նկ,
Մեր ոչխարին մտիկ արա,
Որ գայլը գայ, իմնց արա:

65. Ս Ա Գ Ը Ե Ի Բ Ա Դ Ը

Սագն ու բազը իրար հետ զրոյց էին անում:

— Բազիկ, ասում էր սագը. տեսնո՞ւմ ես՝ ինչ հրաշալի թռչուն եմ ես. ջրումը լողում եմ, օդումը թռչում, գետնի վրայ էլ ման եմ գալիս. ասա, ինձ նման էլ կենդանի կնջ աշխարհումս. ես բոլոր թռչունների թագաւորը չեմ:

«Կասկած չկայ, որ դու շատ շնորհալի թռչուն ես, պատասխանեց բազը. բայց ես էլ քեզանից պակաս չեմ. տես թէ ինչպէս եմ սուրուր տալիս ջրի երեսին, խաղում փրփրուն ալիքների հետ, ինչպէս եմ մտնում ջրի տակը, մանրիկ ձկներ ու ճիճուներ բռնում, նորից դուրս գալիս, ուռչում թագուհու պէս»:

— Այ միամիտ թռչուններ, ասաց նրանց ագռաւը. ինչո՞ւ էք հպարտանում: Կարո՞ղ ես դու, սազիկ, շան պէս արագ վազել:

— Ո՛չ, պատասխանեց սագը:

— Իսկ դու, բազիկ, ծիծեռնակի պէս թռչիլ կարո՞ղ ես:

— Չեմ կարող, ասաց բազը:

«Իսկ ձեզանից ո՞վ կարող է լող տալ ձկան նման»:

Սագն ու բազը գլուխները կախ գցեցին:

«Ես կարծում եմ, ընկերներ, որ աւելի լաւ է, երբ մարդս մի բան գիտէ ու հիմնաւոր, քան թէ շատ բան ու բոլորն էլ թերի»:



66. Բ Ա Դ Ի Կ

«Բառիկ—բառիկ,

Կարմիր թաթիկ,

Ո՛ւր ես գնում կամնաց-կամնաց,

Չագովներդ չորս կողմից արած»:

— Ես գնում եմ՝ ջուր գտնելու,

Չագովներս լուանալու.

Չագովներս մաքուր-մաքուր,

Տղոց երեսն աղտ է ու մուր:

67. Հ Ա Ի Ը Ե Ի Չ Ա Գ Ը

Հաւը ձագերն առաւ ու դնաց քջուջ անելու: Քջուջ անելիս՝ մայրը նկատեց, որ ցինը պտըտում է երկնքի երեսին: Մայրը ձայն տուեց: Չագերը հասկացան, որ վտանգ կայ, վազեցին, մտան մօր թևերի տակ: Յինը երկար պտըտեց և էլ ճուտ չտեսնելով՝ հեռացաւ, դնաց: Հաւը բաց արեց թևերը: Չագերը նորից սկսեցին վազվզել ու խաղալ: Մրատես ուրուրը հեռուից նկատեց ձագերը և դէպի նրանց թռաւ: Հաւն էլ քնած չէր. նա բարձր ձայնով

կանչեց իւր ձագերին: Վագեցին ձագերը, մտան իրանց մօր թիւի տակ: Բայց մի ձագուկ ականջ չարեց մօր ձայնին: Յինը նետի պէս ցած իջաւ, ձանկերի մէջ առաւ նրան ու տարաւ:


68. Ա Ռ Ա Ի Օ Տ

Լուսացաւ, լուսացաւ,
Լուսն է քարին,
Ծիտն է ծառին,
Համն է թատին:
Աշխատատը, վնր կաց քանի,
Ծոյլ մարդոց քունը տանի:
Երկնքի դռները բաց է,
Ոսկէ աթոռը դրած է,
Բրիստոսը վրէն նստած է,
Լուսատրիչը կանգնած է.
Մեծ ու պատիկ գրում են,
Արդարները խաղում են,
Մեղատրները լալիս են:

69. Կ Ա Տ Ո Ւ Ն Ե Ի Մ Ո Ւ Կ Ը

Մի շար կատու կար, որ խեղդում էր ձեռն ընկած մկանը: Մկները ճանաչում էին իրանց թշնամուն և երբոր կատուն տանն էր, բնիցը գուրս չէին գալիս: Բայց փիսօն խորամանկ էլ էր. նա գնաց ամբարը, ալրի մէջ թաթախուեց, մտաւ հացի տաշտը ու նրա մի անկիւնում կուչ եկաւ: Երկար ժամանակ կատուի ձայնը չէր լսոււմ: Մկները կարծեցին, թէ նա սատկել է. գուրս եկան ծակերից և սկսեցին ուտելու բան որոնել: Մէկ մուկը մօ-

տեցաւ հացի տաշտին, նայեց, տեսաւ մի սպիտակ բան. «Լաւ է, ասաց նա. այստեղ համ հաց կայ, համ պանիր»: Ասաց ու մօտ վագեց պանրին: Պանիրն էլ մերալքակորը կատուն էր. թաթը մեկնեց և տեղն ու տեղը խեղդեց մկանը: Յետոյ եկաւ երկրորդը, երրորդը, չորրորդը. իսկ մեր փիսօն ամենքին էլ խեղդոտեց: Վերջապէս մօտ եկաւ մի ծեր ու փորձուած մուկը, կանգնեց տաշտի շրթունքին և զգոյշ նայեց սպիտակ բանին. յետոյ ճանաչեց նրան ու ասաց. «Է՛յ, բարեկամ, ճանաչեցի, մլաւան կատուն ես. գոյնդ ես փոխել, հոգիդ միւկնոյնն է»: Ասաց ու փախաւ, ընկերներին իմաց արաւ:



70. Փ Ի Ս Օ

Կատուն եկաւ, փխսիկ-փխսիկ,
Հազար նագով, ինչպէս հարսիկ,
Դունչը սրբրեց թաթիկներով,
Մազը սանրեց շանչիկներով:
— Կատուն-կատու, է՛ր ես տրտում,
Թէ մկներն են այսօր արթուն:

71. ԿԱՂՆԻ ԾԱՌՈՐ ԵՒ ԵՂԵԳԸ

Անտառի կողքին բարձրացել էր մի մեծ կաղնի: Սրանից քիչ հեռու աճել էր եղէգնիկը: Մի օր կաղնի ծառը գլուխը շարժեց և ասաց եղէգնին. «Ի՞նչքան անպէտք ես և թոյլ, այ ողորմելի. ամեն մի մանուկ քեզ կարող է կտրել, կտրատել. թեթև քամին էլ թերում, գետնիցն է կպցնում քեզ: Իսկ ես, նայիր, ո՞րքան մեծ եմ և յաղթանդամ. ես բանի տեղ չեմ դնում գիւղացի մանուկներին, չեմ էլ վախենում քամուց ու փոթորկից. ես բոլոր ծառերի թագաւորն եմ»: Այս ասած-չասած, սաստիկ փոթորիկ բարձրացաւ: Փոքրիկ եղէգը կռացաւ, գետնիցը կպաւ: Հաստաբուն կաղնի ծառը սկսեց քամու առաջ օրօրուիլ. նրա արմատները ճրրճըռացին, տրաք-տրաքեցին և հպարտ կաղնին վայր ընկաւ, ճղնակոտոր եղաւ:

Քամին անցկացաւ: Փոքրիկ եղէգը նորից բարձրացրեց իւր ճկուն գլուխը և նայելով հարեանին, մտածեց. «Ո՞վ որ փքանայ, շուտով չքանայ»:

72. ՔՐՈՋ ԽՆԴՐՈՒՆԾՔԸ

Ելնեմ՝ ծառը՝ զարդարեմ,
 Վէր գամ տակը՝ մխիթարեմ.
 Հաւի վառիկը մորթեմ,
 Տանեմ գետը, լուսնամ,
 Եփեմ ու չօքանին տամ.
 Զօքանն ինձ մի ոչխար տայ.
 Ոչխարըն Աստուծուն տամ.
 Աստուած ինձ մի եղբայր տայ:

Եղբայր-եղբայր, ջան եղբայր,
 Ջանս քեզ մատառ, եղբայր,
 Կարայ եմ կարել, կարձ է եկել,
 Բուզմայ եմ շարել, խոչ է եկել,
 Ծընծղուկի լեզուն մեղրով,
 Բեզ համար եմ տապակել:

73. ՈՋՆԻՆ ԵՒ ՕՁԸ

Որսորդը տեսաւ ողնուն և յետեից ընկաւ, որ բռնէ: Ողնին փախաւ, ժայռի տակը պահուեցաւ: Ժայռի տակն էլ իրան համար բուն էր շինել օձը և, նրա մէջ կուտապ եկած, ննջում էր: «Բարեկամ, ձայն տուեց ողնին. վրտանգի մէջ եմ. օգնիր, տեղ տուր, որ պահուիմ. երբոր որսորդը կը հեռանայ, շնորհակալութիւն կ'անեմ քեզ»: Օձը յետ քաշուեց: Ողնին ներս մտաւ խոռոչը և որսորդից ազատուեց:

Վտանգն անցած էր: Օձն ասաց ողնուն. «Քնկեր, փշերդ ինձ նեղութիւն են տալիս, հեռացիր, զնա»: Ողնին բարկացաւ: «Ի՞նչպէս ես համարձակուում, սողուն անպիտան, այդ լեզուով խօսել հետս. հեռացիր աչքիցս, քանի դեռ կենդանի ես, ապա թէ ոչ...»: Եւ ապերախտ կենդանին պատրաստուում էր յարձակուել իւր բարերարի վրայ, բայց օձը, նրա միտքը հասկանալով, թողեց իւր տունն ու փախաւ:

74. ԳՈՂ ԱՂՈՒԷՍ

Աղուէսը պսակեց աղբի տակին,
 վնւյ-վնւյ.
 Աչքը գցեց չաղ հաւի ծագին,
 վնւյ-վնյ.

Նետով կըտամ աչքի տակին,
 վնյ-վնյ.
 Որ մօտ չգայ նա մեր քակին,
 վնյ-վնյ:



75. ՈՉԽԱՐՐՆ ՈՒ ԳԱՅԼԸ

Մի անգամ ոչխարը դնաց առուակի մօտ, որ ջուր խմէ: Գայլն էլ ջուր էր խմում միևնոյն առուակից: Գայլը վերեն էր կանգնած, ոչխարը ներքեր: Չար գազանը կամեցաւ ոչխարին ուտել: Նա վերեկից ձայն տուեց. «էյ, դու, ինչպէս ես համարձակում ջուրս պղտորել. այդ բանի համար ես քեզ իսկոյն կը խեղդեմ, կ'ուտեմ»:

—Տէր իմ, կանչեց ոչխարը, ինչպէս կարող եմ քո ջուրը պղտորել. ես ներքեն եմ կանգնած, իսկ դու վերևումն ես:

«Պղտորում ես, թէ շես պղտորում, այդ միևնոյն է, ես քեզ պէտք է ուտեմ. ձեր ցեղը միշտ թշնամի է եղել ինձ. երէկ ես ուզում էի մօտենամ հօտին, քո հայրն էր, որ շներին իմաց տուեց. նրանք յետեիցս ընկան, քիչ մնաց պատառ-պատառ էին անում»:

—Ես հայր չունիմ, տէր, հայրս վաղուց է մեռել:
 «Ուրեմն մայրդ կըլինէր»:

—Մայր էլ չունիմ. մայրս հէնց այն օրը մեռաւ, երբ ինձ ծնեց:

«Ուրեմն ազգականներիցդ մինը կըլինէր. ինչ էլ որ լինի, գու միշտ մեղաւոր ես իմ առաջ»: Այս ասաց շար գազանը և անմեղ ոչխարին խեղդեց ու լափեց:

76. Գ Ա Ռ Ն Ո Ւ Կ

Սիրոնն, անմեղ իմ գառնուկ,
 Բուրդոդ սպիտակ ու փափուկ,
 Դաշտ վազելով ու արօտ,
 Մ'օրդ քաշում ես կարօտ:
 Մ'ի շար, գառնուկ սիրական,
 Փոքրիկ արդի դու նման,
 Կըգայ մայրըդ, հետը շատ
 Կը սերէ քեզ անուշ կաթ:

77. Կ Թ Ի Կ Ո Վ

Մարդու մէկը մի կով ունէր: Կովը կաթնով կերակրում էր նրա չորրոր ընտանիքը: Համատիկինը կաթնից մածուն էր մէրում: Մածունը պատրաստի կերակուր է խեղճի զաւակների համար: Կաթնից և մածնից խնոցի էր հարում. իւրը հանում՝ պահում, թանն էլ եփում՝ կերակուր շինում: Կովի կաթնից պանիր էլ են շշինում՝ ձմեռուայ համար պահում: Այսպէս կաթնատու կովը գիւղացու համար մեծ հարստութիւն է: Մեր ասած կովն էլ կաթնատու կով էր. օրէնը երկու անգամ կթուում էր և ամեն անգամ մի մեծ կովկիթ կաթն էր տալիս: Մի անգամ գիւղացին հիւրերի էր սպասում. խնամիքը հարեան գիւղից տեսութեան պիտի գային. կաթը շատ պիտի հար-

կաւորուէր. պէտք էր կարագ, սէր, մածուն պատրաստել: Ի՞նչ անէր տանտիկինը: Մտածեց-մտածեց խելօքը և վրձ-
ուեց որ երեք-չորս օր չկթէ կովը: «Յետոյ վերջին օրը
հինգ-վեց կովկիթ միանգամից կրկթեմ», ասաց նա: Բայց
ինչ. երեք-չորս օրից յետոյ՝ երբ ուզում էր կթել, տեսաւ
որ ցամաքել է. անկթիլ մնալուց կաթը յետ էր տուել
կովի ծծերում: Խեղճ տանտիկինը նոր հասկացաւ, որ ամենայն
ընդունակութիւն բթանում է, երբ չի գործածուում:

78. Խ Ր Ա Տ

Մի խնորհր Աստուծոց ոչ փող, ոչ պատիւ,
Այլ քեզ կրթելու՝ խելք, շնորհք, սիրտ ազնիւ.
Երբէք մի՛ պարծենար, թէ արդէն գիտուն ես.
Որքան քան սովբես՝ այն է օգուտ քեզ:
Ընկերներին զգնող եղիւր,
Աղքատներին սէր ցոյց տուր.
Տէրն ասում է՝ չէ անվարձ
Նսեւ քաժակ մի ցուրտ չուր:

79. ՓԻՂ ԵՒ ՔՈԹՈԹ

Փղապանը փողոցներով անց էր կացնում իւր ձեռ-
նասուն փիղը՝ մարդկանց ցոյց տալու, փող հաւաքելու
համար. մարդիկ էլ մեծ բազմութեամբ հետևում էին
նրան: Յանկարծ մի փոքրիկ քոթոթ, որտեղից որ էր,
գուրս վազեց և սկսեց սաստիկ հաչել նրա վրայ: Մեծ
շունը տեսաւ այդ և ասաց. «Չայնդ կտրիր, այ լակոտ,
դու սով ես, որ փղի դէմ հաչում ես. ահա՛ դու հետում ես,
իսկ նա հաչելուդ էլ ուշք չի դարձնում՝ հանդարտ ու
անխռով շարունակում է իւր ճանապարհը»:

— Ես հօ նրա համար չեմ հաչում, որ փղին վախե-
ցնեմ, պատասխանեց քոթոթը. իմ միտքս այն է՝ որ ու-
րիշները տեսնեն իմ արածը և ասեն. «Տեսէ՛ք՝ քոթոթը
որքան քաջ է, որ փղի դէմ էլ կը հաչէ»:

80. ՏՂԱՅՈՅ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնատր, հայր ամեն մարդի,
Դու ինձ ամեն օր տաս հազար քարի՝
Կեանք, լոյս, կերակուր, հայր եւ քաղցրիկ մայր,
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
Իսկ ես ի՞նչ ունիմ, որ ինչ տամ Քեզի.
Առջեւ կ'ընկնիմ, կենամ աղօթքի.
«Շնորհող տուր ինձ, որ ծնողներիս,
Ոսուցիչներիս եւ իմ մեծերիս,
Լինիմ սիրելի, իսկ Քեզ համելի»:

81. ՄԵՂՈՒ ԵՒ ՃԱՆՃ

Ճանճերը գոր չէին իրանց կացած տեղից. նրանք
խորհուրդ արին, որ ուրիշ երկիր գնան: Բայց մենակ չէին
ուզում գնալ. իրանցից մէկին ուղարկեցին մեղուի մօտ,
որ նա էլ գայ:

«Մեղու եղբայր, ասաց ճանճը. չար մարդիկ մեզ
դադար չեն տալիս. հերիք չէ, որ ամեն բան ծածկում են
մեզանից, պատուհաններումը էլ թոյն են դնում, որ ու-
տենք ու մեռնենք: Խրճիթներումն մեզ չեն նեղացնում
մարդիկ, բայց այնտեղ էլ ուրիշ թշնամի ունինք՝ սարդե-
րը ձգում են իրանց ոստայնները, մեր ոտները մճճում
են, մեզ խեղդում, մեր արիւնը ծծում: Արի, մեղու եղ-
բայր, գնանք, հեռանանք այստեղից:



Մեղուն լսեց և պատասխանեց. «Դուք գնացէք, ուր որ կամենում էք. ես ձեր ընկերը չեմ. ինձ համար այստեղ էլ շատ լաւ է. ամենքը պատուում են ինձ ու սիրում. ես էլ ամենքին օգուտ եմ տալիս. իմ մեղրը թէ՛ չար և թէ՛ բարի մարդու, թէ՛ հարուստի և թէ՛ աղքատի ճաշակը քաղցրացնում է. իմ տուած մոմը Աստուծու տաճարն է լուսաւորում: Դուք գնացէք, ուր որ կամենում էք. միայն գիտենաք, որ ամեն տեղ էլ ձեզ կը հայածեն, որովհետեւ ոչ ոքի օգուտ չէք տալիս. բացի օգուտ չտալը, ձանձրացնում էլ էք»:

84. ՄԵՂՈՒՆ ՈՒ ՃԱՆՃԸ

Մ Ե Ղ Ո Ւ Ն

Գարուն, ամառ, ամեն օր
 ես գնում եմ դաշտ ու ձոր.
 Աշխատում եմ ես անվերջ,
 Մեղր պտրում ծաղկանց մէջ:
 Եւ գտածըս ես շիտակ
 Իսկոյն տանում եմ փեթակ,
 Որ երբ փրչէ ցուրտ քամին,
 Ծաղիկները թառամին,

Ես ձմեռը պաշարով
 Լինիմ իսպառ ապահով:

Ճ Ա Ն Ճ Ը

Փոքրիկ ձանձ եմ գուարճատէր,
 Միշտ թռչում եմ վայր ու վեր,
 Մի հով տան մէջ, մի բակում,
 Սաստիկ արևի տաքում.
 Կերուխումից, խաղից ջոկ
 Իսկի չունիմ ուրիշ հոգ
 Եւ, ներկայով բաւական,
 Միտք չեմ բերում ապագան:

85. Օ 2 Ը

Ձմեռն էր: Գիւղացին անտառ գնաց փայտ կտրելու:
 Փայտ կտրելիս նա տեսաւ մի օձ, որ ցրտից սառել, փե-
 տացել էր: Բարի գիւղացին խղճաց օձին, վերցրեց, դրեց
 կրակի մօտ, որ տաքանայ: Օձը տաքացաւ թէ՛ չէ՛ վրայ
 վազեց, որ գիւղացուն կծէ:

«Ո՛վ ապերախտ, ասաց մարդը, իմ լաւութիւնը դրա-
 նով ես վճարում»: Այս ասաց ու կացնի քիւփով խփեց,
 զլուխը ջախջախեց:

86. Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր Ի Ն

Արևն իւր ոյժը կորցրած՝
 Ամպերի տակ ծածկուեցաւ,
 Սաստիկ քամին ողջ ծառերի
 Տերևները վէր ածաւ:

Չատ թռչուններ և թիթեռներ
Անյայտացան դաշտերից.
Ծառը չունի կանաչ տերև՝
Նա զրկուած է իւր զարդից:

Երկնքումը ամպի քուլէքն
Անձրևներ են պատրաստում,
Անտառը իւր տերևներով՝
Առուն տըխուր քըչքըչում:

Ինչի դաշտերի սողուններ
Եւ վայրենի թռչուններ
Չտապում են իրանց համար
Մի ապահով տեղ գտնել:

87. ՈՋՆԻՆ ԵՒ ԳԱՅԼԸ

Սոված գայլը մի օր թափառում էր դաշտումը և ուտելու բան էր որոնում: Քանի օր էր՝ նա ոչինչ չէր կերել, խեղճի փորը վեց-վեց էր անում: Այդ միջոցին նա տեսաւ մի փոքրիկ կենդանի, որ կամաց-կամաց առաջ էր գալիս: Սա փշոտ ոզնին էր: Գայլը մօտեցաւ նրան: Ոզնին ոտն ու ձեռը հաւաքեց, կծկուեցաւ, փշերը ցից արեց: Գայլը դժուարի բռնուեցաւ. նա մտածեց խորամանկութեամբ բանը գլուխ բերել: «Սիրուն, ոզնի, ասաց նա. այդ ինչ սիրունիկ ոտիկներ, ինչ նազանի դունչ ունիս. ափսոս միայն, որ զգեստդ փշոտ է. ինչ կը լինի, ընկերիկ, քնքուշ փորդ գոնէ չծածկես այդ անալիտան փշերով»:

Ոզնին քթի ծայրը դուրս հանեց և ասաց. «Հանգիստ թող ինձ, գայլ, գովասանքիդ կարօտ չեմ: Ընտրհակալ եմ

Աստուծուց, որ մարմինս ծածկել է փշերով. եթէ այս փշերը չլինէին, դու ուրիշ լեզուով կըխօսէիր հետս»:

88. ՄԱՆՈՒԿՆԵՐԸ ԵՒ ԹՈՉՆԱԿԸ

«Սիրուն թռնակ, բռնուեցար,
Ցանցից չես ազատուիլ.
Ոչինչ բանով աշխարհում
Քեզից չենք բաժանուիլ»:

—Ա՛խ, ձեր ինչին եմ պէտք ես,
Սիրելի մանուկներ.
Թողէք ինձ ազատ թռչեմ.
Բացէք ցանցիս դռներ:

«Ձէ, չէ, թռչնակ, չենք թողնիլ,
Դու մեզ մօտ պիտ' մնաս.
Մենք քեզ շարքէ հաց կը տանք,
Կ'ուտես, կ'ուրախանաս»:

—Ա՛խ, շարքէ հաց չեմ սիրում,
Քաղցրեղէն չեմ ուտում.
Թողէք, դաշտի մորեխներն
Չաքրից լաւ եմ հաշում:

«Այնտեղ, դաշտում, ձմեռը
Դուցէ ցրտից մեռնիս,
Իսկ մեզ մօտ ոսկուց չինած
Վանդակի մէջ կ'ապրիս»:

—Օ՛, մի վախէք՝ ձմեռը
Տաք կողմեր կը թռչեմ,
Իսկ բռնուած դրախտն էլ
Ինձ բանտ կը համարեմ:

«Թռչնակ-թռչնակ, մենք ի՞նչպէս
Քեզ կը փայփայէինք,
Չէինք թողնիլ, որ տըխրես,
Միշտ կ'ուրախացնէինք»:

— Հաւատում եմ. բայց ձեր սէրն
Ինձ միշտ կը վնասէր,
Որովհետեւ այդ կերպով
Աչքս յաւիտեան կը փակուէր:

«Ճմարիտ է, ո՞վ թռչուն,
Գերութեան չես տանիլ,
Աստուած քեզ հետ, դէ՛հ, թռի՛ր,
Ազատ, ուրախ եղի՛ր»:

89. ՈՒ Լ Ե Ր Ն ՈՒ Գ Ա Յ Լ Ը

Լինում է-չի լինում մի այծ: Այս այծն անտառում
իրան համար տուն է շինում և իր գաւաղների—փոքրիկ
ուլերի հետ բնակում է նրա մէջ: Ամեն առաւօտ մայրը
գուրս է գնում արածելու: Գնարուց առաջ նա ասում է
իր ձագերին. «Որդիք, դռները փակեցէք, հանգիստ կա-
ցէք և եթէ դրսից մարդ գալու լինի, դուռը բաց չանէք»:
Ասում է ու գնում: Դաշտումը լաւ արածելուց, կուրծը
կաթնով լցնելուց յետոյ, այծը տուն է գալիս: Տան դու-
րները փակ են: Նա պոզերով դուռը ծեծում է ու կանչում.

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէ՛ք, բացէ՛ք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը բաց են անում դուռը: Մայրը ծիծ է տալիս
նրանց և կրկին գնում արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը. նա մտքումը

գնում է, որ խաբելով ներս մտնէ ուլերի փարախը, երբ
մայրն այնտեղ չլինի: Մի օր՝ երբ այծը դուրսն է լի-
նում, գայլը կամաց-կամաց գալիս է, թաթով դռանը իր
փում է ու կանչում.

«Չալիկ-մալիկ ուլիկներ,
Չալ-պըտուրիկ այծիկներ,
Ելէ՛ք, բացէ՛ք տան դուռը,
Պատրաստ է ձեր ապուրը»:

Ուլերը մի լաւ ահանջ են գնում. նրանք հասկանում
են, որ դուռը ծեծողը իրանց մայրը չէ և պատասխա-
նում են. «Դու մեր մայրը չես, կորի՛ր, հեռացի՛ր այդտե-
ղից. մեր մայրը բարակ ձայն ունի ու քաղցր է մկկում,
դուռն էլ պոզերով է ծեծում»: Ասում են ու դուռը բաց
չեն անում: Գայլը թողում, հեռանում է: Փոքր ժամանա-
կից յետոյ գալիս է մայրը, նա գովում է ուլերին, որ
դուռը բաց չեն արել. — «Դուք շատ լաւ էք արել, որ-
դիք, որ դուռը բաց չէք արել, թէ չէ՛ նա ձեզ ամե-
նիդ էլ կ'ուտէր»:

90. Գ Ա Ռ Ն ՈՒ Մ Ա Յ Ր Ը

— Ի՞նչ ես լալիս, գանձուկս:
«Խիստ ծեծ կերայ, մայրիկս»:
— Քեզ ո՞վ ծեծեց, անլիկ:
«Մէկ չար պառաւ, իմ մայրիկ»:
— Ինչի՞ ծեծեց քեզ, գանձիկ:
«Ծառի տակն էի, մայրիկ»:
— Ինչո՞վ ծեծեց, նազանի:
«Հաստ ճիպոտով, իմ նանի»:
— Ո՞րտեղիդ գարկեց, անուշիկ,
«Պտիկներիս քնքուշիկ»:

— Ի՞նչպէս լացիր, անմեղիկ:
«Մէ, մէ, մէ, մէ, իմ մայրիկ»:

92. ԿԻՍԼԱՆՋԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

I. Լինում է-չի լինում մի պառաւ: Այս պառաւն ու-
նենում է երեք տղայ՝ երկուսն առողջ, իսկ երրորդը պա-
կասաւոր: Նրանք ապրում էին խեղճ-աղքատիկ: Մի օր
պառաւն ասում է որդոցը. «Միրելի որդիք, տեսնում էք՝
ինչ չքաւորութեան մէջ ենք. ինչ էք տանը նստոտել.
գնացէք, աշխարհս մեծ է, մի գործ բռնեցէք, որ ձեզ
համար գոնէ մի կտոր հաց ունենաք: Եղբայրները խոր-
հրդի են նստում: Ի՞նչ անեն, ինչ չանեն: Միջնակ եղ-
բայրը մեծին ասում է. «Լսել ես, անպէք, ասում են, որ
այս-ինչ անտառում մի վիշապ կայ, մեծ հարստութեան
տէր, արի-գնանք, սպանենք նրան և փողերը վեր առ-
նենք»: Մեծ եղբայրը համաձայնութիւն է տալիս: Փոքր
եղբայրը խնդրում է, որ իրան էլ հետները տանեն:

— Դու ինչի համար ես գալիս, Կիսլանջ, գլխներիս
բեռ լինելով. դու տանը կը մնաս, մեր մօրը կը մխիթարես,
մինչև որ մենք յետ կը գանք, ասում են եղբայրները: Յե-
տոյ իրանց մօրը մնաս բարով ասելով՝ նրանք ճանապարհ
են ընկնում:

Գնում են-գնում, շատն ու քիչն Աստուած գիտէ, և
հասնում են մի ազրիւրի, որի մօտից ճանապարհը երկու-
սի էր բաժանւում. մեծ եղբայրը բռնում է մէկ ճանա-
պարհը, միջնակը՝ միւս:

Գնում է-գնում մեծ եղբայրը և պատահում է մի հովուի:

— Բարի աջոգում:

«Աստուծու բարին»:

— Հովիւ եղբայր, եթէ այս ճանապարհը բռնած գը-
նամ, այս-ինչ վիշապի բնակարանին չեմ հասնիլ:

«Կըհասնես, բայց Աստուած ազատէ քեզ այդ բանից.
Ինչ ունիս դու այն մարդակերի մօտ»:

— Լսել եմ որ մեծ հարստութեան տէր է. ուզում եմ
սպաննեմ և փողն ու հարստութիւնը վեր առնեմ:

Երբ այս խօսքերը լսեց բարի հովիւը, սկսեց քթի
տակը փրնթփրնթալ.

«Անձ մի մահկանացու,
Իր գլխից ձեռք վեր առած,
Դատարկ յոյսերից խաբուած,
Կամենում է գոհ լինել
Մեծ վիշապին մարդակեր»:

— Ի՞նչ ես ասում, հովիւ եղբայր, մի՞թէ կարծում ես,
որ չեմ կարող սպանել վիշապին: Օ՛, դու ինձ չես ճա-
նաչում:

«Այ մարդ, գիտես ինչ կայ, ասում է հովիւը. ես քեզ
մի փորձ կ'առաջարկեմ. ես կրկիթեմ իմ երկու սև այծերը,
կաթնով կըլցնեմ այս կովկիթը, կըբրդեմ, առաջը կըղնեմ.
յետոյ կըհեծնեմ այծերիցս մինը և կըպտըտեմ հօտի շուր-
ջը. եթէ դու այդ միջոցին բոլոր կովկիթը գատարկած լի-
նիս, կարող ես վիշապին յաղթել, եթէ ոչ՝ չես կարող»:
Պառաւի տղան համաձայնուեց: Հովիւը կովկիթը լցրեց և
ինքն սկսեց պտըտել. բայց երբ եկաւ մեր ճանապարհորդի
մօտ, նա կաթնաբրդոյ կէսն էլ չէր կերել: Այն ժամա-
նակ բարի հովիւն ասաց նրան.

«Արի, եղբայր, մի անիւր,
Փորձուած հովուիս անհնջ դիւր,
Յետ դառ, գլուխդ ազատիր»:

Ականջ չարեց մեր ճանապարհորդը խեղճ հովուի
խօսքին և առաջ գնաց: Գնաց-գնաց և պատահեցաւ մի
ուղտապանի:

— Բարի աջոգում: —

«Աստուծու բնորին: Օտար եղբայր, ուր ես գնում»: —

— Գնում եմ այս ինչ վիշապին սպանեմ և նրա գանձը վեր առնեմ:

Ուղտապանն էլ՝ այս որ լսեց, սկսեց երգել.

«Ահա մի մահկանացու,

Իր գլխից ձեռք վեր առած,

Դատարկ յոյսերից խաբուած,

Կամենում է դո՛ւ լինել

Մեծ վիշապին մարդակեր»:

— Ի՞նչ ես երգում, ուղտապան:

«Ես այն եմ երգում, որ դու կըզնաս, ինչպէս գնացել են շատերը և էլ յետ չես դառնալ. վիշապը ողջ-ողջ կուլ կըտայ քեզ: Պէտք է դիտենաս, այ օտարական, որ նա միայն կարող է մեծ վիշապի հետ կռիւ տալ, ո՞վ որ անա այս ուղտին փշելով դետին կըգլորէ»:

Այս ասաց ուղտապանը և մի մեծ ուղտ քաշեց, մեր ճանապարհորդի առաջ կանգնացրեց: Պառաւի տղան ուղեց ցոյց տալ իր ոյժը. փչեց, փչեց, բայց ուղտը տեղիցն էլ չշարժուեց, ուր մնաց թէ վէր ընկնէր: Այն ժամանակ բարեսիրտ ուղտապանը նորից սկսեց երգել.

«Մըի, եղբայր, մի անիր,

Ուղտապանիս ականջ դիր,

Յնտ դառ, գլուխդ ազատիր»:

Ծիծաղեց մեր ճանապարհորդը բարի ուղտապանի վրայ և շարունակեց ճանապարհը: Գնաց, հասաւ, վիշապի կացարանին: Դուան ճեղքից մտիկ արեց և տեսաւ, որ վիշապը նստած է, մի անագին կաթսայ առաջը դրած, ձեռքին էլ մի մեծ շերեփ. ճաշ էր ուտում:

Պառաւի տղան կանչեց.

«Վիշապ-վիշապ, դո՛ւրս արի,

Միմեանց հետ կռիւ անենք,

Բաց ու արձակ սրահում

Չօր-զօրի տանք, կոխ բռնենք»:

Չատ ուրախացաւ վիշապը, որ մի խեղճ աղամորդի իր ոտովն եկել է իրան դուռը և, առանց տեղիցը շարժուելու, ներսից պատասխան տուեց.

«Օ՛տարական, քո ձայնից

Իմ սիրտս կտրատոււմ է,

Բոլոր մարմինս երկիւղից,

Ոտն ու ձեռս դողում է.

Աղաչում եմ, ինձ խղճա՛

Մի սպանիր չարաշար,

Մտիր, իմ բոլոր տունս

Քեզ մատաղ է, վեր առ, տնր»:

Ճանապարհորդը խաբուեցաւ և միամիտ ներս մտաւ վիշապի սենեակը: Վիշապը բռնեց նրա վզակոթից և, ներքնատան դուռը բանալով, ցած գլորեց: «Գնա՛, երգիւր այդտեղ մի առժամանակ, ասաց վիշապը. ես դեռ ևս մի քանի օրուայ պաշար ունիմ ուտելու»:

II. Միւս առաւօտ վիշապը լսեց, որ մի ուրիշ մարդ էլ է ծեծում իր դուռը և կանչում.

«Վիշապ-վիշապ, դո՛ւրս արի,

Միմեանց հետ կռիւ անենք,

Բաց ու արձակ սրահում

Չօր-զօրի տանք, կոխ բռնենք»:

«Այս ինչ բաղդաւորութիւն է, մտածեց վիշապը. երբէք չի պատահել, որ մարդիկ իրանց ոտով իմ դուռը գան, իսկ հիմա մէկի տեղակ երկուսն են դալիս»:

Վիշապը պատասխանեց.

«Օ՛տարական, քո ձայնից

Իմ սիրտս կտրատոււմ է.

Բոլոր մարմինս երկիւղից,

Ոտն ու ձեռս դողում է.

Աղաչում եմ, ինձ խղճա՛
 Մի սպանիր չարաչար,
 Մտիր, իմ բոլոր տունս
 Քեզ մատաղ է, վեր առ, ասը»:

Անձանօթը հպարտ-հպարտ ներս մտաւ: Վիշապն ուղարկեց նրան իր եղբոր մօտ:

III. Անցնում է մի քանի ժամանակ. մեր հովուի մօտ գալիս է մի մարդ, մի զարմանալի կիսլանջ մարդ, և հարցնում է, թէ այս ճանապարհով երկու օտարական չեն անցկացել: Հովիւը պատմում է, որ երկու անցուորական՝ իր խրատին չլսելով, գնացին դէպի մեծ վիշապի կացարանը, որ ինչ է, նրան սպանեն և փողն ու հարստութիւնը վեր առնեն. բայց, աւելացրեց հովիւը, նրանք արդէն վիշապին զոհ կըլինին եղած:

Կէս-մէջքանի, մի-կռանի մարդը պատասխանեց.

«Այդ անցուորականներն իմ մեծ եղբայրներս էին. այժմ ես գնում եմ, որ նրանց վրէժն առնեմ»:

Բարի հովիւը ժպտաց և երգեց.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
 Լայն թիկունքով, հաստ վրդով
 Ի՞նչ շահուեցան նրանից,
 Թէ դու, Կիսլանջ, ինչ շահուիս»:

Այնուհետև հովիւը Կիսլանջին էլ առաջարկեց իր պայմանը. կ[թեց այժեքը, կովկիթը կաթնով լցրեց, բրդեց և դրեց Կիսլանջի առաջ, իսկ ինքը հեծաւ այժեքից մինը և սկսեց պտըտել հօտի շուրջը: Ո՛րքան զարմացաւ հովիւը, երբ՝ վերադառնալով Կիսլանջի մօտ, տեսաւ, որ նա կերել-պրծել է և կովկիթն էլ լայրստում է:

«Քսան տարի հովիւ նս՛,
 Չատ մարդիկ եմ ես տեսել,
 Չատ մարդիկ հէնց այս փորձով
 Ես ճանապարհ եմ դցել»:

Բայց այսպիսի մի զարմանք
 Ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել»:
 «Գնա՛, եղբայր, համարձակ,
 Աստուած քեզ հետ, կարող ես
 Չար վիշապին սպանել,
 Փողն ու գանձը վեր առնել»:

Առաջ գնաց մեր Կիսլանջը և պատահեցաւ ուղտապանին:

— Բարի աջո՞ղում. ուղտապանն եղբայր, այս ճանապարհով երկու օտարական չեն անցկացել:

— Անց են կացել, պատասխանեց ուղտապանը. ողորմելիքը գնում էին մեծ վիշապին սպանելու, բայց չէին իմանում, որ իրանց պէս հարիւրաւոր մարդիկ գնացել են և չեն վերադարձել:

Կէս-մէջքանի, մի կռանի մարդը պատասխանեց.

«Դրանք եղբայրներս էին. այժմ ես կըգնամ և նրանց արեան վրէժը կ'առնեմ»:

— Օհօ, բացագանչեց ուղտապանը.

«Եղբայրներդ ջուխտ ձեռքով,
 Լայն թիկունքով, հաստ վրդով
 Ի՞նչ շահուեցան նրանից,
 Թէ դու, Կիսլանջ, ինչ շահուիս»:

Այնուհետև ուղտապանն էլ առաջարկեց Կիսլանջին իւր պայմանը. մէկ ուղտ բերեց, կանգնացրեց Կիսլանջի մօտ և առաջարկեց, որ նրա վրայ փորձէ իւր ուժը: Կիսլանջն այնպէս փշեց, որ ուղտը հինգ դագ յետ ու յետ գնաց ու վէր ընկաւ:

Ուղտապանը զարմացաւ և ասաց.

«Չատ տարի է ուղտապան,
 Չատ մարդիկ եմ ես տեսել,
 Չատ մարդիկ հէնց այս փորձով
 Ես ճանապարհ եմ գցել,
 Բայց այսպիսի մի զարմանք

Ո՛չ տեսել եմ, ո՛չ լսել:
 Գնա՛, եղբայր, համարձակ,
 Աստուած քեզ հետ, կարող ես
 Չար վիշապին սպանել,
 Փողն ու գանձը վեր առնել»:

Գնաց մեր Կիսլանջ բարեկամը, վիշապի տուն հասաւ,
 դուռը ծեծեց և կանչեց.

«Մարդակեր վիշապ, դազան ամեհի,
 Հերիք անպատիժ մատնես մեզ մահի.
 Հընչեց քո ժամը՝ ժամ օրհասական.
 Ես վերջ պիտ' դընեմ կեանքիդ անպիտան»:

Ջարմացաւ վիշապը այս յանդուզն խօսքերի վրայ,
 բայց ուզեց Կիսլանջին էլ խաբերով ներս կանչել.

«Ո՛վ ես դու, տէր իմ, մարդ ես, թէ վիշապ.
 Չայնըդ է ուժգին, խօսքերդ սարսափ.
 Բայց ով էլ լինիս, պատրաստ եմ ահա՝—
 Բաւ է որ կամիս—դու տէր, ես ծառայ»:

Խելօք Կիսլանջը շխաբուեցաւ և նորից կանչեց.

«Խարդախ ձեերով շատ մարդ ես խաբել,
 Չատին ներս տարել, մորթել ու լափել,
 Բայց էլ հերիք է՝ պէտք է որ դուրս գաս.
 Գլուխըս վըկայ, պիտ' լինիս մաս-մաս»:

Բարկացաւ վիշապը և կատաղած դուրս վազեց, որ
 յանդուզն մարդու մեծ պատառը ականջը թողի: Բայց
 գլուխը դուրս հանեց թէ չէ, Կիսլանջի լղրանոց թուրը
 պսպղաց և վիշապի գլուխը երկու կէս եղաւ: Մարի նման
 գազանը վէր ընկաւ, սատկեց: Կիսլանջը ներս մտաւ վի-
 շապի բնակարանը, պտըտեց բոլոր սենեակները, ամեն
 քունջ ու պուճախ նայեց, և բայց եղբայրներին չգտաւ:
 Երկիւղը պատեց բարի Կիսլանջի սիրտը՝ մի՛ դուցէ չար
 գազանն արդէն լափել է նրանց: Կիսլանջն սկսեց ձայն
 տալ, կանչել: Այդ ժամանակ ոտների տակից մի խուլ հա-

ռաչանք լսեց: Յաժ նայեց և յատակի վրայ դռան պէս
 մի բան տեսաւ: Չտապով բարձրացրեց այդ դուռը, ականջ
 դրեց և պարզ կերպով լսեց եղբայրների ձայնը, որոնք
 օգնութիւն էին կանչում: Կիսլանջը ցած թռաւ իսկոյն և
 յայտնեց եղբայրներին, ուր սպանել է գազանին: Նրանք
 իրար փաթաթուեցան, մէկ-մէկու համբուրեցին և ճաշե-
 ցին միասին: Ճաշելուց յետոյ բոլոր տունը պտըտեցին,
 ման եկան և մառանի յատակի տակ մի հոր գտան. սա
 գազանի խազնահորն էր: Կիսլանջի կոնատակերից թոկ
 կապեցին և ցած թողեցին հորը: Հորի մէջ անթիւ ոսկի
 կար: Կիսլանջը առաջ մեծ եղբօր պարկը լցրեց, դուրս
 քաշել տուեց, յետոյ երկրորդինը և յետոյ իրանը: Երբոր
 ոսկով լիքը պարկերը դուրս էին հանած, Կիսլանջը կան-
 չեց, որ թոկը ցած թողեն, մէջքիցը կապի ու իրան
 էլ դուրս քաշեն... Կանչեց Կիսլանջը, ձայն տուեց... պա-
 տասխան չկայ, մարդ չկայ...

Կիսլանջի եղբայրները թողեցին իրանց ազատողին
 հորի մէջ, վեր առան ոսկով լիքը պարկերը և ճանապարհ
 ընկան դէպի տուն: Բայց Կիսլանջը հորի մէջ չմեռաւ: Նա
 ոտնատեղեր շինեց հորի պատերի վրայ և, շատ չարչար-
 ւելուց յետոյ, դուրս եկաւ: Ոսկով լիքը պարկը դրած էր
 հորի մօտ: Կիսլանջը շալակեց պարկը և շտապեց, որ եղ-
 բայրներին համի: Գնաց, տեսաւ, որ նրանք պառկել են
 մի ծառի տակ ու քնել: Կամաց-կամաց մօտեցաւ, զգու-
 շութեամբ վեր առաւ նրանց պարկերը, տարաւ, թափեց
 միջի ոսկին մի ապահով տեղ, մանր խճաքարով լցրեց
 պարկերը և բերեց իրանց առաջուայ տեղը դրեց ու ինքը
 թաղկացաւ: Եղբայրները վեր կացան, վեր առան պար-
 կերը և ճանապարհ ընկան դէպի տուն: Կիսլանջն էլ գը-
 նում էր նրանց յետևից: Երբոր մեր ապերախտները տուն
 հասան, դուռը ծեծեցին և ասացին.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Ն Ի Ի Թ Ե Ր Ի Յ Ա Ն Կ Ը

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց... վիշապին սպանեցինք, նրա ոսկին պարկերով շալակած այստեղ բերինք»:
 Պառաւր ռսկու ձայնը որ լսեց, ուրախ-ուրախ դուրս վազեց, որդկերանցը համբուրեց, յետոյ շտապեց, մեծ տաշտը բերեց և ինչ դատարկեց:— Խիճ: Եղբայրները փայտի պէս սառած մնացին: Այդ ըրոպէին հերդիցը մէկը ձայն տուեց.

«Մայրիկ-մայրիկ, դուռը բաց...

Վիշապին սպանեցի,
 նրա ձեռքից ես դրանց
 Ողջ ու առողջ փրկեցի.
 Բայց դրանք ինձ խարեցին՝
 Ուզելով ինձ սպանել,
 Հորի մէջը թողեցին.
 Այլ Աստուած էր օգնական՝
 Ինձ այն հորից ազատեց,
 Դրանց պատիժն էլ տուեց...
 Պարկերը խճով լցրեց.
 Սակայն դրանց, մայր, ներիք,
 Եւ տանից մի դուրս անիր»:

Մայրը գրկեց բարեսիրտ ու մեծահոգի Կիսլանջին
 և նրա համար ձուածնդ արեց:



I. Յառաջարան	1 մինչև 15
II. ԱՌԱՋԻՆ ԵՐԼԱՆ—Այբբենարան՝	
ա. շուն, միս, ջուր—ու, շ. ն, ի, ս, մ, ջ, ր.	
բ. էջը. է, ք. ձ, ն. Մ, Ս. Ջ, է, Լ. Բ.	
գ. սագ, բադ, լիճ, ա, գ, բ, դ, լ, ճ, Ա, Գ, Բ, Դ, Լ, ձ.	
դ. հաւ, ձագ, ցին, հ, լ, ձ, ց. չ, ց, 2, Յ.	
ե. մուկ, կատու. կ, տ. Կ, Տ. վանկել.	
զ. կաղնի, ծառ, եղէգ. դ, Ղ. ծ, ու. Ծ, Ռ. ե, Ե.	
է. ողնի, օձ, ո, Ո. դ, Ջ, օ, Օ.	
ը. ոչխար, շ. 2, խ, Խ.	
թ. կով, կաթ, պանիր. վ. Վ. թ. Թ. պ. Պ. ւ և վ տառերի դործածութիւնը. իւ իբրև վանկ (իվ) և իբրև հնչիւն (յօ).	
ժ. փիղ, քոթոթ, ժանիք. փ, Փ, ք, ժ. Փ, Փ, Գ, ժ.	
ժա. յոպոպ. յ տառի դործածութիւնը.	
III. գրաւոր այբբենարան շորս երեսից բաղկացած:	
IV. ԵՐԿՐՈՐԻ ԵՐԼԱՆ՝ բաղկացած տասն եւ չորս մանրա- շըջանից՝	
Ա. 1. դասական առարկաներ և խաղալիք	19
2. Դրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	20
3. Դասատուն (նկարագրական-գրուցատրական նիւթ)	—
« Հրաւէր (մանկական ոտանաւոր)	—
4. Ջոկ-Ջոկ և միասին (պատմողական-գրուցատրական նիւթ).	21
Բ. 5. Ուտելիք և խմելիք	—
« Դրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ.	—
6. Հաց և ջուր (նկարագրական-գրուցատրական նիւթ).	22
7. Աքաղաղ (մանկական ոտանաւոր).	23
8. Աղօթք—«Հայր-մերը» աշխարհիկ լեզուով.	—
Գ. 9. Չինութիւններ, նաւեր, կառքեր.	24
« Դրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	—
10. Մեր տունը (նկարագրական-գրուցատրական նիւթ).	25
11. Նապաստակ (մանկական ոտանաւոր).	—
12. Կատուի խրատը (պատմողական-գրուցատրական նիւթ).	26
Դ. 13. Գործիք և սարք	—
« Դրաւոր վարժութիւններ, առականեր, հանելուկներ	—
14. Մեր ընտանիքը (նկարագրական-գրուցատրական նիւթ).	27
15. Առաւօտեան աղօթք (մանկական ստանաւոր).	—
16. Համբերութիւնը կեանք է (պատմողական-գրուցատրա-	

	կան նիւթ)	28
Ե.	17. Կարասիք և ամաններ	29
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	—
	18. Աթոռ և գաւաթ (նկարագրական-զրուցատրական նիւթ)	30
	19. Արև (մանկական ոտանաւոր)	—
	20. Լեռնի վախը (պատմողական-զրուցատրական նիւթ)	—
Զ.	21. Կենդանիներ	31
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	33
	22. Երկու արաղաղ (պատմողական-զրուցատրական նիւթ)	—
	23. Պառան ու այծը (մանկակ. ոտանաւոր)	34
	24. Աղուէսն ու ճագարը (նկարագր. զրուցատր. նիւթ.)	—
Է.	25. Քոյսեր	35
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	—
	26. Մանուշակ (մանկական ոտանաւոր)	37
	27. Յորեն և գարի (նկարագր.-պատմողական նիւթ)	—
	28. Անձրև (մանկական ոտանաւոր)	38
Ը.	29. Հանքեր	—
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	39
	30. Ոսկին և երկաթը (նկարագր.-պատմողական նիւթ)	—
Թ.	31. Մարդ	40
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	—
	32. Երկու հովիւ	41
	33. Երեկոյեան աղօթք (մանկական ոտանաւոր)	—
	34. Ոչխարի բուրդը (նկարագր.-պատմողական նիւթ)	—
Ժ.	35. Աշքի, բերանի, դաստակի և գարշապարի մասերը	42
	36. Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	43
	37. Երկու և մի (մանկական ոտանաւոր)	—
	38. Ծոյլը և ջանասէրը	44
	39. Որբի պահողն Աստուած է	—
ԺԱ.	40. Հինգ զգայարանք	45
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	—
	41. Կաղն ու կոյրը	—
	42. Առաւօտ (մանկական ոտանաւոր)	—
	43. Մեղուններ (պատմողական—նկարագրական նիւթ)	46
	44. Մեղու (մանկական ոտանաւոր)	47
ԺԲ.	45. Մարդիկ, կենդանիներ, բոյսեր, հանքեր	—
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ, հանելուկներ	48
	46. Պսակներ (մանկական պարերգ)	49
ԺԳ.	47. Օրուայ մասերը, շարաթուայ օրերը, ամիսներ, եղանակներ	50
	« Գրաւոր վարժութիւններ, առածներ հանելուկներ	—
	48. Կիւրակնամուտ (մանկ. ոտանաւոր)	51
	49. Ե՛րբ է լինում	—

50.	Զիւն	—
51.	* * *	մանկական ոտանաւորներ
52.	Մայիսին	52
53.	Չորս ցանկութիւն	53
ԺԴ.	54. Տօներ	—
	55. Նուրին	—
	56. Ժօլի	մանկական ոտանաւորներ տօն-
	57. Ժշանակ	րին համապատասխան 55—57
	58. Ս. Սարգսի երգը	—
	59. Ծննդեան երգը	—
	60. Տէրունական Աղօթք ՆՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ՝ ազատ ընթերցանութեան համար	57
	61. Ազահ շուն	58
	62. Ուսումնարան	—
	63. Էջը և շունը	—
	64. Արև (մանկ. ոտան.)	59
	65. Մազը և բազը	60
	66. Քաղիկ (մանկ. ոտան.)	—
	67. Հաւը և ձագը	61
	68. Առաւօտ (մանկական ոտանաւոր)	—
	69. Կատուն և մուկը	62
	70. Փիսօ	—
	71. Կաղնին ու եղէգը	63
	72. Քրոջ խնդրուածքը	64
	73. Ողնին և օձը	—
	74. Գող աղուէս	65
	75. Ոչխարն ու գայլը	—
	76. Գառնուկ	66
	77. Կթի կով	67
	78. Խրատ	—
	79. Փիղ և քոթոթ	68
	80. Տղայոց աղօթք	—
	81. Մեղու և ճանձ	69
	82. Մեղուն ու ճանձը	—
	85. Օձը	70
	86. Նոյեմբերին	71
	87. Ողնին և գայլը	—
	88. Մանուկները և թռչնակը	72
	89. Ուլերն ու գայլը	73
	90. Գառն ու մայրը	74
	91. Կիսլանջի պատմութիւնը	75
		76



ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երես

- «20»—I. Փետուրէ գրիչ. II. Հօլ (բղղան):
- «22»—I. Զու: II. Զուր, գետ:
- «24»—I. Մեղրահաց (բճիճ): II. Կառքի անիւները:
- «27»—I. Հրացան: II. Թուր, դաշոյն:
- «29»—I. Սեղան: II. Հեշտահու (սամալար):
- «33»—I. Կրիայ: II. Փիղ:
- «37»—I. Թուղը: II. Հացահատիկներ:—III. Նուշ:
- «39»—I. Ոսկի և արծաթ:—II. Ոսկի:
- «40»—I. Բերան, ակահջներ, աչքեր:—II. Քիթ:
- «43»—I. Բերան և առամներ:—III. Զեռներ, ստներ, մատներ:
- «45»—I. Կարգալ-գրել:
- «48»—I. Մարդը՝ մանկական, այրական և դառամեալ հասակում:
- «50»—I. Արեգակ:



2013

4584

«Ազգային գրադարան»

NL0062654

9377-1
 1961
 ИНИСТИТУТА
 ВОСТОЧНОЕ ВЕЩЕ
 АНДЖЕЛИИ
 СССР

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ
 ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Տէր-Ղևոնդեան՝ Մայրենի Լեզու, առաջին տարի . 25 կ.
2. » Մայրենի Լեզու, երկրորդ տարի . 40 կ.
3. » Մայրենի Լեզու, երրորդ տարի . 50 կ.
4. » Մայրենի Լեզու, չորրորդ տարի . 65 կ.
5. » Մայր. Լեզուի բաց. ձեռ. ա. տար. . 60 կ.
6. » Մայր. Լեզուի քերականութ. տարբերք,
 » առաջին և երկրորդ մասը . . . 50 կ.
7. » Հայորդի՝ Սրբազան պատմ. Հին Կտակ. 50 կ.
8. » Սրբազան պատմ. Նոր Կտակարանի 50 կ.
9. Գէորգ-Յէզեան՝ Ժողովածու թուար. խնդ. Ամբ. թուեր 40 կ.
10. Մանգլինեան՝ Նահապետական Աշխարհ. . (սպառ.)
11. » Ընտանեկան Աշխարհ . . 25 կ.
12. » Դիւցազնական Աշխարհ . . 25 կ.
13. » Հենչէլի՝ բանաւոր և գրաւոր հաշուելու
 » խնդիրներ, առաջին և երկրորդ տարի (սպառ.)
14. » Բանաւոր և գրաւ. հաշու. խնդ. գ. տարի 50 կ.

Գումարով գնողները 20% զիջումն ունին:

Գրմի՛ Въ Центральную Книжную Торговлю
 въ Тифлисѣ.